

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մաքսային միության
հանձնաժողովի 2011 թվականի
հուլիսի 15-ի թիվ 710 որոշմամբ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի անվտանգության մասին

(ՄՄ ՏԿ 003/2011)

Բովանդակություն

Հոդված 1. Կիրառության ոլորտը	3
Հոդված 2. Սահմանումներ	4
Հոդված 3. Շուկայում շրջանառության կանոնները	12
Հոդված 4. Անվտանգության պահանջները	12
Հոդված 5. Անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովումը.....	31
Հոդված 6. Համապատասխանության գնահատումը	31
Հոդված 7. ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը.....	64
Հոդված 8. Պաշտպանության մասով վերապահումը	65
Հավելված թիվ 1 Ցանկ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգերի բաղկացուցիչ մասերի եվ ենթահամակարգերի բաղկացուցիչ մասերի տարրերի.....	67
Հավելված թիվ 2 Ցանկ շահագործման ընդունման ենթակա՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների.....	72
Հավելված թիվ 3 Ցանկ սերտիֆիկացման ենթակա արտադրանքի	74
Հավելված թիվ 4 Ցանկ համապատասխանության հայտարարագրման ենթակա արտադրանքի.....	77
Հավելված թիվ 5 Ցանկ արտադրանքի սերտիֆիկացման սխեմաների	80
Հավելված թիվ 6 Ցանկ արտադրանքի համապատասխանության հայտարարագրման սխեմաների	86

Հոդված 1. Կիրառության ոլորտը

1. Մաքային միության (այսուհետ՝ ՄՄ) սույն Տեխնիկական կանոնակարգը տարածվում է երկաթուղային, այդ թվում՝ ընդհանուր եւ ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտի ենթակառուցվածքի (այսուհետ՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածք) վրա:

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կանոնակարգման օբյեկտը երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքն է, որն իր մեջ ներառում է՝

ա) երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգերը, ինչպիսիք են՝ երկաթուղային ուղին, երկաթուղային էլեկտրամատակարարման կառույցները, երկաթուղային ավտոմատիկան եւ հեռուստամեխանիկան, երկաթուղային էլեկտրակապը, ինչպես նաեւ կայարանային շենքերը, կառուցվածքները եւ սարքվածքները.

բ) երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգերի բաղկացուցիչ մասերը եւ բաղկացուցիչ մասերի տարրերը՝ թիվ 1 հավելվածի համաձայն:

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները պարտադիր են երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ավարտուն օբյեկտների նախագծման (ներառյալ հետազննության), արտադրման, կառուցման, մոնտաժման, կարգաբերման, ընդունման եւ շահագործման մեջ դնելու, ինչպես նաեւ արտադրանքի համապատասխանության գնահատման ժամանակ:

Երթեւեկության անվտանգության ապահովման մասով երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի շահագործմանը ներկայացվող պահանջները սահմանվում են ՄՄ անդամ պետությունների երկաթուղային տրանսպորտի մասին օրենսդրությամբ:

2. Սույն Տեխնիկական կանոնակարգի գործողությունը չի տարածվում ավելի քան 200 կմ/ժ արագությամբ ընթացող գնացքների երթեւեկության համար

նախատեսված երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի (արագընթաց երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի) վրա:

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի գործողությունը չի տարածվում այն կազմակերպությունների տեխնոլոգիական երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի վրա, որը նախատեսված է այդ կազմակերպության տարածքում մարդկանց եւ նյութական արժեքների տեղափոխման եւ այդ կազմակերպությունների սեփական կարիքների համար երկաթուղային շարժակազմի գործարկման եւ փակման գործողությունների իրականացման համար:

3. ՄՄ սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքին ներկայացվող պահանջներ՝ մարդու կյանքի եւ առողջության, կենդանիների ու բույսերի պաշտպանության, գույքի պահպանության, ինչպես նաեւ դրա նշանակությանը եւ անվտանգությանը վերաբերող՝ սպառողներին (օգտագործողներին) մոլորեցնող գործողությունների կանխարգելման նպատակով:

Հոդված 2. Սահմանումներ

Սույն Տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետեւյալ եզրույթները՝

երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի անվտանգություն՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի վիճակ, երբ բացակայում է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքին, պետական կամ մունիցիպալ գույքին, ինչպես նաեւ շրջակա միջավայրին, կենդանիների եւ բույսերի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հետ կապված անթույլատրելի ռիսկ.

շրջանառության մեջ դնելը՝ արտադրանքի կենսական պարբերաշրջանի փուլ պատրաստումից մինչեւ շահագործման հանձնելը.

կառույցների մոտեցման եզրաչափքեր՝ երկաթուղային ուղու առանցքին ուղղահայաց լայնակի սահմանային ուրվագիծ, որի մեջ բացի երկաթուղային շաժակազմից չպետք է մտնեն կառուցվածքների եւ սարքվածքների մասերը, ինչպես նաեւ երկաթուղային ուղու շրջակայքում գտնվող նյութերը, պահեստամասերը եւ սարքավորումները, բացառությամբ՝ երկաթուղային շարժակազմի հետ անմիջական փոխգործողության համար նախատեսված սարքվածքների մասերի (ամրակման մանրամասեր ունեցող հպալարեր, ջրաբաշխման հիդրավլիկ սյունիկների թելերը ջուր վերցնելուց եւ այլն)՝ պայմանով, որ այդ սարքվածքների դիրքը եզրաչափքերի ներսում ընկած տարածության մեջ երկաթուղային շարժակազմի համապատասխան մասերի հետ այնպիսին է, որ դրանք չեն կարող հպվել երկաթուղային շարժակազմի այլ տարրերի հետ.

անվտանգության ապացույց՝ արտադրանքի անվտանգության մասին փաստաթուղթ, որը պարունակում է արտադրանքի՝ նորմատիվային, նախագծային եւ կոնստրուկտորային փաստաթղթերով սահմանված անվտանգության պահանջներին համապատասխանության ապացույցների, եւ արտադրանքի անվտանգության ցուցանիշների՝ թույլատրելի արժեքներին համապատասխանության ապացույցների ամբողջություն.

թույլատրելի ռիսկ՝ ենթակառուցվածքի օբյեկտների տիրապետողի տեխնիկական ու տնտեսական հնարավորություններից կախված՝ ենթակառուցվածքի օբյեկտների կիրառմամբ պայմանավորված ռիսկի արժեք, որը համապատասխանում է արտադրանքի կյանքի պարբերաշրջանի բոլոր փուլերում ապահովվող անվտանգության մակարդակին.

երկաթուղային ավտոմատիկա եւ հեռուստամեխանիկա՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգ, որը ներառում է տեխնիկական կառուցվածքների եւ ազդանշանային, կենտրոնացման եւ ուղեփակման սարքվածքների ամբողջություն, որոնք նաեւ մանևրային աշխատանքների միջոցով ապահովում են գնացքների երթևեկության

կառավարումը կայարանամեջերում եւ կայարաններում.

Երկաթուղային կայարան՝ կետ, որը երկաթուղային գիծը բաժանում է գծանցների կամ բլոկ-տեղամասերի, ապահովում է երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի աշխատանքը, ունի գծային զարգացում, որը թույլ է տալիս իրականացնել գնացքների ընդունման, ուղարկման եւ վազանցման, ուղեւորների սպասարկման, բեռների, ուղեբեռների եւ բեռնաձանրոցների ընդունման, հանձնման գործողություններ, իսկ ուղու զարգացած կառույցների դեպքում իրականացնել գնացքների ապակազմավորման եւ կազմավորման մանևրային աշխատանքներ, ինչպես նաեւ գնացքների հետ կապված տեխնիկական գործողություններ.

Երկաթուղային էլեկտրակապ՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգ, որը ներառում է երկաթուղային տրանսպորտի տեխնոլոգիական գործընթացների իրականացման ընթացքում էլեկտրակապի հաղորդումների ձեւավորումը, ընդունումը, մշակումը, պահպանումը, փոխանցումը եւ մատուցումը ապահովող տեխնիկական կառուցվածքների եւ սարքվածքների ամբողջություն.

Երկաթուղային էլեկտրամատակարարում՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգ, որը ներառում է էլեկտրաէներգիա սպառող երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգերի, ինչպես նաեւ էլեկտրաֆիկացված երկաթուղիների վրա քարշային շարժակազմի էլեկտրամատակարարումն ապահովող տեխնիկական կառուցվածքների եւ սարքվածքների ամբողջություն.

Երկաթուղային գծանց՝ ավտոմոբիլային ճանապարհի՝ երկաթուղային ուղիների հետ միեւնոյն մակարդակի վրա փոխհատում, որը սարքավորված է երկաթուղային տրանսպորտի շարժակազմի եւ տրանսպորտային միջոցների անցման համար անվտանգ պայմաններ ապահովող սարքվածքներով.

Երկաթուղային հետիոտնային անցում՝ հետիոտնային ուղու՝ երկաթուղային

ուղիների հետ միեւնոյն մակարդակի վրա փոխհատում, որը սարքավորված է հետիոտների անցման համար անվտանգ պայմաններ ապահովող սարքվածքներով.

Երկաթուղային ուղի՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգ, որը ներառում է ուղու վերին կառույցները, հողային պաստառը, հողային պաստառի ջրահեռացման, ջրթող, հակադեֆորմացիոն, պաշտպանիչ եւ ամրացման կառուցվածքները, որոնք գտնվում են հատկացման գոտում, ինչպես նաեւ արհեստական կառուցվածքները.

արտադրանքի նույնականացում՝ համապատասխանության պարտադիր հավաստման ներկայացված արտադրանքի բնութագրերի՝ արտադրանքն ուղեկցող փաստաթղթերում նշված բնութագրերին նույնականության հաստատում.

նորարարական արտադրանք՝ արտադրանք, որի թե՛ տեխնոլոգիական բնութագրերը (ֆունկցիոնալ հատկանիշները, կոնստրուկտիվ կատարումը, լրացուցիչ գործողությունները, ինչպես նաեւ կիրառվող նյութերի եւ բաղադրիչների կազմը) եւ թե՛ ենթադրյալ օգտագործումը համարվում են սկզբունքորեն նոր կամ էպես տարբերվում են նախկինում արտադրվող արտադրանքի անալոգից.

տեսչական հսկողություն՝ համապատասխանության ստուգիչ գնահատում, որն իրականացվում է որոշելու համար, որ արտադրանքը շարունակում է համապատասխանել ՄՄ տեխնիկական կանոնակարգով սահմանված այն պահանջներին, որոնք հաստատվել են սերտիֆիկացման ժամանակ.

Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածք՝ տեխնոլոգիական համալիր, որը ներառում է երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգերը, երկաթուղային տրանսպորտի ենթահամակարգերի բաղկացուցիչ մասերը եւ ենթահամակարգերի բաղկացուցիչ մասերի տարրերը, որոնք ապահովում են այդ համալիրի գործունեությունը.

հայումային ցանց՝ հաղորդալարերի, կոնստրուկցիաների եւ սարքավորումների ամբողջություն, որոնք ապահովում են քարշային ենթակայաններից երկաթուղային շարժակազմի հոսանքնդունիչ էլեկտրական էներգիայի փոխանցումը.

նախատեսված ռեսուրս՝ արտադրանքի աշխատանքի գումարային տեսողությունը, որը լրանալուց հետո արտադրանքի շահագործումը պետք է դադարեցվի՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի տեխնիկական վիճակում է այն գտնվում.

ծառայության նախատեսված ժամկետ՝ արտադրանքի շահագործման օրացուցային տեսողությունը, որը լրանալուց հետո արտադրանքի շահագործումը պետք է դադարեցվի՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի տեխնիկական վիճակում է այն գտնվում.

պահպանման նախագծային ժամկետ՝ արտադրանքի պահպանման օրացուցային տեսողությունը, որը լրանալուց հետո արտադրանքը չպետք է պահվի՝ անկախ այն հանգամանքից, թե ինչպիսի տեխնիկական վիճակում է այն գտնվում.

անվտանգության հիմնավորում ռիսկի վերլուծություն, ինչպես նաեւ կոնստրուկտորական, շահագործման, տեխնոլոգիական փաստաթղթերից վերցված՝ անվտանգության ապահովման համար անհրաժեշտ նվազագույն միջոցների վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, որը կցվում է արտադրանքին դրա կենսական պարբերաշրջանի բոլոր փուլերում, եւ որում լրացվում են վերանորոգման աշխատանքներից հետո շահագործման փուլում ռիսկերի գնահատման արդյունքների մասին տեղեկությունները.

երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտ՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգերի բաղկացուցիչ մաս եւ դրա ենթահամակարգերի բաղկացուցիչ մասերի ամբողջություն.

ռիսկի գնահատում՝ նախապես սահմանված չափանիշների հետ ռիսկի

վերլուծված մակարդակների համեմատման գործընթաց, ինչպես նաև այն ոլորտների բացահայտում, որտեղ առկա է ռիսկի մշակման անհրաժեշտություն.

անձնագիր՝ փաստաթուղթ, որը պարունակում է պատրաստողի կողմից տրամադրվող երաշխիքների, արտադրանքի հիմնական պարամետրերի ու բնութագրերի (հատկությունների) արժեքների մասին վկայող, ինչպես նաև արտադրանքի սերտիֆիկացման եւ ուտիլիզացման մասին տեղեկություններ.

կայարանամեջ՝ երկաթուղային գծի մաս, որը սահմանափակված է կից երկաթուղային կայարաններով, կիսակայարաններով, վազանցային կետերով կամ ճանապարհային պահակակետերով.

սահմանային վիճակ՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների վիճակ, երբ դրա հետագա շահագործումն անթույլատրելի է կամ աննպատակահարմար կամ՝ դրա աշխատունակության վերականգնումն անհնար է կամ աննպատակահարմար.

ընդունում՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի կառուցված օբյեկտի համապատասխանության գնահատման ձև.

արտադրանք՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգերի բաղկացուցիչ մասերի տարրեր կամ դրա ենթահամակարգերի բաղկացուցիչ մասերի տարրերի ամբողջություն.

վերանորոգման փաստաթղթեր՝ փաստաթղթեր, որոնք պարունակում են վերանորոգման կազմակերպման, հիմնական, միջանկյալ եւ ընթացիկ վերանորոգում իրականացնելու կարգի եւ կանոնների, հսկողության, կարգավորման, փորձարկման, կոնսերվացման, վերանորոգումից հետո արտադրանքի փոխադրման եւ պահպանման, մոնտաժման եւ փորձարկման վերաբերյալ ցուցումներ, ինչպես նաև ցուցանիշների եւ նորմերի արժեքներ, որոնց պետք է համապատասխանի արտադրանքը՝ վերանորոգումից հետո.

շահագործման ձեռնարկ՝ փաստաթուղթ, որը պարունակում է ինչպես

արտադրանքի կառուցվածքի, գործողության սկզբունքի, բնութագրերի (հատկությունների) մասին տեղեկություններ եւ ցուցումներ, որոնք անհրաժեշտ են արտադրանքի ճիշտ եւ անվտանգ շահագործման (ըստ նշանակության օգտագործման, տեխնիկական սպասարկման, ընթացիկ վերանորոգման, պահպանման եւ տրանսպորտային փոխադրման) եւ արտադրանքի վերանորոգման անհրաժեշտությունը որոշելիս դրա տեխնիկական վիճակի գնահատման համար, այնպես էլ արտադրանքի ուտիլիզացման հետ կապված տեղեկություններ.

սերտիֆիկացված արտադրանք՝ արտադրանք, որի ՄՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության պարտադիր հավաստումն իրականացվել է սերտիֆիկացման ձեով.

ենթահամակարգերի բաղկացուցիչ մաս՝ հատուկ նշանակության կառուցվածքներ, կառույցներ, սարքվածքներ եւ սարքավորումներ, որոնք ապահովում են երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգերի գործունեությունը եւ երկաթուղային շարժակազմի անվտանգ երթեւեկությունը.

կայարանային շենքեր, կառուցվածքներ եւ սարքվածքներ՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգ, որը ներառում է երկաթուղային կայարաններում բեռների, փոստային առաքանիների եւ գնացքների, երկաթուղային տրանսպորտի եւ երկաթուղային շարժակազմի ենթակառուցվածքի տեխնիկական սպասարկման եւ վերանորոգման, ինչպես նաեւ ուղեւորների սպասարկման հետ կապված գործողություններ իրականացնելու համար նախատեսված շենքերի, կառուցվածքների, սարքվածքների տեխնոլոգիական համալիրներ.

տեխնիկական համատեղելիություն՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգերի՝ միմյանց եւ երկաթուղային շարժակազմի հետ փոխգործողության ունակությունը ՄՄ սույն տեխնիկական կանոնակարգով

սահմանված պահանջներին համապատասխան.

տեխնոլոգիական երկաթուղային տրանսպորտ՝ կազմակերպությունների տարածքներում ապրանքների տեղափոխման եւ երկաթուղային շարժակազմի գործարկման ու փակման գործողությունների իրականացման համար նախատեսված երկաթուղային տրանսպորտ, որը չունի դեպի ընդհանուր եւ ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային ուղիներ ելքի իրավունք՝ նշված կազմակերպությունների սեփական կարիքների համար.

տեղեկամատյան (ֆորմուլյար)՝ փաստաթուղթ, որը պարունակում է պատրաստողի կողմից տրամադրվող երաշխիքների, նշված արտադրանքի տեխնիկական վիճակն արտացոլող՝ արտադրանքի հիմնական պարամետրերի ու բնութագրերի (հատկությունների) արժեքների մասին վկայող տեղեկություններ, արտադրանքի սերտիֆիկացման եւ ուտիլիզացման մասին տեղեկություններ, ինչպես նաեւ դրա շահագործման (աշխատանքի տեւողությունը եւ պայմանները, տեխնիկական սպասարկումը, վերանորոգումը եւ այլն) ժամանակահատվածում ներառվող տեղեկություններ.

շահագործման փաստաթղթեր՝ կոնստրուկտորական փաստաթղթեր, որոնք առանձին կամ մյուս փաստաթղթերի հետ սահմանում են արտադրանքի շահագործման կանոնները եւ (կամ) ներառում են պատրաստողի կողմից երաշխավորված՝ արտադրանքի հիմնական պարամետրերի ու բնութագրերի (հատկությունների) արժեքների մասին վկայող տեղեկություններ, ինչպես նաեւ ծառայության սահմանված ժամկետում դրա շահագործման երաշխիքներ ու տեղեկություններ.

ենթահամակարգի տարր՝ արտադրատեսակ կամ կոնստրուկցիա, որը կիրառվում է երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգի բաղկացուցիչ մասի կառուցման եւ մոնտաժման դեպքում:

Հոդված 3. **Շուկայում շրջանառության կանոնները**

1. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտները եւ տարրերը շուկայում շրջանառության մեջ են դրվում ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգին, ինչպես նաեւ ՄՄ այլ տեխնիկական կանոնակարգերին կամ Եվրասիական տնտեսական համայնքի (այսուհետ՝ ԵվրԱզԷՍ) այն տեխնիկական կանոնակարգերին դրանց համապատասխանության դեպքում, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

2. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի այն օբյեկտները եւ տարրերը, որոնց համապատասխանությունը ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին չի հավաստվել, չպետք է մակնշվեն ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով եւ չպետք է թույլատրվեն շուկայում շրջանառության մեջ դրվելու համար եւ հանձնվեն շահագործման:

Հոդված 4. **Անվտանգության պահանջները**

1. Հաշվի առնելով վնաս հասցնելու ռիսկի աստիճանները՝ ՄՄ սույն տեխնիկական կանոնակարգով սահմանում են արտադրանքին ներկայացվող նվազագույն անհրաժեշտ պայմանները, որոնց կատարման դեպքում ապահովվում են՝

- ա) ճառագայթման անվտանգությունը.
- բ) կենսաբանական անվտանգությունը.
- գ) պայթյունաանվտանգությունը.
- դ) մեխանիկական անվտանգությունը.
- ե) հրդեհային անվտանգությունը.
- զ) արդյունաբերական անվտանգությունը.

է) ջերմային անվտանգությունը.

ը) էլեկտրական անվտանգությունը.

թ) էլեկտրամագնիսական համատեղելիությունը սարքերի եւ սարքավորումների աշխատանքի անվտանգությունն ապահովելու մասով.

ժ) չափումների միասնականությունը:

2. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների եւ արտադրանքի նախագծման դեպքում ռիսկի աստիճանը պետք է գնահատվի հաշվարկային, փորձարարական եւ փորձագիտական եղանակով, ինչպես նաեւ երկաթուղային տրանսպորտի համանման օբյեկտների եւ արտադրանքի շահագործման վերաբերյալ տվյալների հիման վրա: Ռիսկի աստիճանի գնահատման մեթոդները կարող են սահմանվել ՄՄ տեխնիկական կանոնակարգի հետ համապատասխանությունը գնահատելու (հավաստելու) նպատակով կիրառվող ստանդարտներով կամ ստանդարտների ցանկում ներառված ստանդարտացման այլ փաստաթղթերով (այսուհետ՝ ստանդարտներ):

3. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների եւ արտադրանքի անվտանգությունը պետք է ապահովվի հետեւյալ միջոցներով՝

ա) երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների եւ արտադրանքի նախագծման դեպքում գիտահետազոտական եւ փորձակոնստրուկտորական համալիր աշխատանքների իրականացում.

բ) փորձահավանության արժանացած տեխնիկական լուծումների կիրառում.

գ) արտադրանքի ծառայության նախատեսված ժամկետների եւ (կամ) ռեսուրսների սահմանում, ինչպես նաեւ անհրաժեշտ պարբերականությամբ տեխնիկական սպասարկման ու վերանորոգման աշխատանքների իրականացում.

դ) փորձահավանության արժանացած մեթոդակարգի վրա հիմնված համալիր հաշվարկների կատարում.

ե) երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների եւ արտադրանքի նախագծման (ներառյալ հետազննության), արտադրման, կառուցման, մոնտաժման, կարգաբերման եւ շահագործման մեջ դնելու ժամանակ կիրառվող նյութերի ընտրություն՝ պայմանավորված շահագործման պարամետրերով եւ պայմաններով.

զ) սահմանային վիճակների չափանիշների սահմանում.

է) նախագծային փաստաթղթերի պահանջների պահպանում՝ նախագծողի կողմից հեղինակային վերահսկողության միջոցով իրականացվող հսկողությամբ.

ը) արտադրանքի ուտիլիզացման պայմանների եւ եղանակների որոշում.

թ) արտադրանքի համապատասխանության գնահատման իրականացում:

4. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտները եւ արտադրանքն, ըստ ամրության, կայունության եւ տեխնիկական վիճակի, պետք է ապահովեն թույլատրելի արժեքների սահմաններում առավելագույն արագություններով ընթացող գնացքների անվտանգ երթևեկությունը:

5. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտները եւ արտադրանքը պետք է ապահովեն՝

ա) կառույցների մոտեցման եզրաչափքերի պահպանումը.

բ) շահագործման պայմանների կատարումը՝ հաշվի առնելով արտաքին կլիմայական ու մեխանիկական ներգործությունները.

գ) տեխնիկական համատեղելիությունը երկաթուղային շարժակազմի հետ:

6. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների եւ արտադրանքի նախագծման դեպքում նախագծողը (մշակողը) պետք է ընտրի այնպիսի լուծումներ, որոնք ապահովում են ՄՄ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված՝ մարդու, կենդանիների ու բույսերի կյանքի ու առողջության համար վնասակար եւ (կամ) վտանգավոր ներգործությունների

թույլատրելի մակարդակները:

7. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների եւ արտադրանքի՝ նախագծողի (մշակողի) կողմից ընտրված կոնստրուկցիաները պետք է անվտանգ լինեն նախատեսված ծառայության ժամկետի եւ (կամ) ռեսուրսի, նախատեսված պահպանման ժամկետի ընթացքում, ինչպես նաեւ դիմակայեն այն ազդեցությանը եւ բեռնվածությանը, որոնց կարող են դրանք ենթարկվել շահագործման ընթացքում:

8. Նախագծողը (մշակողը) երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտները եւ արտադրանքը նախագծելիս, անհրաժեշտության դեպքում, պետք է նախատեսի այնպիսի ծրագրային միջոցներ, որոնք կապահովեն երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների եւ արտադրանքի աշխատանքի անվտանգությունը:

9. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների եւ արտադրանքի կառուցման նախագծային փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում չպետք է նվազեցվեն ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգով նախատեսված՝ նախագծման ժամանակ սահմանված անվտանգության պահանջները:

10. Անվտանգության վրա ազդող արտադրանքի կոնստրուկցիայում կամ պատրաստման տեխնոլոգիայում փոփոխություններ կատարելու դեպքում, պետք է ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածով սահմանված կարգով անցկացվի արտադրանքի համապատասխանության պարտադիր հավաստում:

11. Արտադրանքը պետք է ունենա լավ նշմարվող նույնականացման եւ նախազգուշացնող գրություններ եւ մականշվածք, որոնք պետք է վերարտադրվեն եւ պարզաբանվեն շահագործման ձեռնարկում:

12. Արտադրանքը պետք է ունենա արտադրանքի նույնականացումն ապահովող մականշվածք՝ անկախ դրա թողարկման տարվանից, այդ թվում՝

ա) ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության

միասնական նշանը.

բ) պատրաստողի անվանումը կամ դրա ապրանքային նշանը, արտադրանքի անվանումը.

գ) պատրաստման ամսաթիվը:

Այն դեպքում, երբ հաշվի առնելով արտադրանքի կոնստրուկցիայի առանձնահատկությունները, մականշվածը հնարավոր չէ անմիջականորեն զետեղել արտադրանքի վրա, թույլատրվում է, որ այն զետեղվի միայն փաթեթվածքի վրա եւ դրա մասին նշվի կից ներկայացվող շահագործման փաստաթղթերում:

13. Չափումների միասնականության ապահովման պետական կարգավորման ոլորտին առնչվող չափումների միջոցները, որոնք տեղակայված են ենթակառուցվածքի օբյեկտների վրա պետք է լինեն հաստատված տիպի եւ ունենան ստուգաչափման նշան եւ (կամ) ստուգաչափման վկայական՝ ՄՄ անդամ պետությունների չափումների միասնականության ապահովման վերաբերյալ օրենսդրությանը համապատասխան:

14. Մականշվածքը եւ շահագործման փաստաթղթերը ձեւակերպվում են ՄՄ այն անդամ պետության պետական լեզվով, որտեղ պատրաստվել է արտադրանքը, ինչպես նաեւ ռուսերենով:

15. Արտադրանքից առաջացող էլեկտրամագնիսական խանգարումների մակարդակը չպետք է գերազանցի այն արժեքները, որոնց սահմաններում այդ խանգարումները չեն ազդում երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների, մյուս արտադրանքի, ինչպես նաեւ երկաթուղային շարժակազմի աշխատունակության վրա:

16. Արտադրանքի համար պետք է նախատեսված լինի ենթահամակարգերի բաղկացուցիչ մասերի վտանգավոր տարրերի ուտիլիզացման կարգ՝ շահագործումից դուրս գալուց հետո դրանց օգտագործումը կանխելու նպատակով:

17. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտները եւ արտադրանքը շահագործման մեջ դնելուց առաջ նախագծային փաստաթղթերով նախատեսված վայրերում պետք է նշվեն կամ տեղակայվեն վտանգների եւ անվտանգ շահագործման պայմանների մասին նախազգուշացնող գրություններ եւ նշաններ:

18. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտները եւ արտադրանքը շահագործման մեջ դնելու ժամանակ պարտադիր է շահագործման եւ վերանորոգման փաստաթղթերի լրակազմի առկայությունը:

19. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների եւ արտադրանքի նախագծման, կառուցման եւ դրանք շահագործման մեջ դնելու ժամանակ պետք է կատարվեն ՄՄ անդամ պետությունների՝ շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի վերաբերյալ օրենսդրության պահանջները:

20. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների եւ արտադրանքի նախագծման ժամանակ պետք է հաշվի առնվեն շրջակա միջավայրի վրա թույլատրելի մարդածին բեռնվածության նորմատիվները, նախատեսվեն շրջակա միջավայրի աղտոտումը կանխելուն եւ վերացնելուն ուղղված միջոցառումներ, ինչպես նաեւ արտադրական եւ սպառողական թափոնների տեղաբաշխման եղանակներ, կիրառվեն ռեսուրսախնայող, սակավաթափոն, անթափոն եւ այլ ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնք նպաստում են շրջակա միջավայրի պաշտպանությանը, բնական միջավայրի վերականգնմանը, ինչպես նաեւ բնական պաշարների ռացիոնալ օգտագործմանը եւ վերարտադրմանը:

21. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների եւ արտադրանքի կառուցման ժամանակ ՄՄ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, պետք է ձեռնարկվեն միջոցներ՝ ուղղված շրջակա միջավայրի պաշտպանությանը, բնական միջավայրի վերականգնմանը, հողերի վերակուլտիվացմանը եւ տարածքների բարեկարգմանը:

22. Երկաթուղային տրասպորտի ենթակառուցվածքի օբյեկտների եւ արտադրանքի նախագծման, կառուցման եւ դրանք շահագործման մեջ դնելու ժամանակ պետք է նախատեսվեն եւ իրականացվեն այնպիսի միջոցառումներ, որոնք ապահովում են վայրի կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը եւ դրանց մշտական բնակության վայրերը, այդ թվում՝ բազմացման եւ ձմեռման ժամանակահատվածում:

23. Երկաթուղային ուղու, երկաթուղային ուղու բաղկացուցիչ մասերի եւ երկաթուղային ուղու բաղկացուցիչ մասերի տարրերի անվտանգության ապահովման նպատակով սահմանվում են հետեւյալ պահանջները՝

ա) երկաթուղային ուղու բոլոր բաղկացուցիչ մասերը (հողային պաստառ, ուղու վերին կառուցվածք եւ այլն) եւ երկաթուղային ուղու բաղկացուցիչ մասերի տարրերը (ռելսեր, սլաքային փոխադրիչներ, ռելսային ամրակներ, կոճեր, բալաստ (կոպճավազ) եւ այլն) ամրությամբ, կրողունակությամբ եւ կայունությամբ թույլատրելի արժեքների սահմանները չգերազանցող առավելագույն արագության դեպքում պետք է ապահովեն երկաթուղային շարժակազմի անվտանգ երթուղեկությունը.

բ) ուղու վերին կառույցը եւ հողային պաստառը պետք է ապահովեն երկաթուղային ուղու դիրքի կայունությունը՝ ըստ հատակագծի եւ երկայնական պրոֆիլի: Կորերի երկրաչափական պարամետրերը պետք է սահմանվեն այնպես, որ ապահովեն երկաթուղային շարժակազմի կայունությունը եւ խոչընդոտեն ռելսերից անիվների արտանկումը եւ շրջվելը.

գ) ջրհոսքերի եւ ջրամբարների երկայնությամբ ուղու դասավորության դեպքում ջրհոսքերի վրայով անցնող հողային պաստառի եզերքի մակարդակը ջրթող կառուցվածքի մերձակայքում, ինչպես նաեւ ամրապնդվող շեպերի գագաթները պետք է վեր խոյանան ջրի ամենաբարձր հաշվարկային մակարդակի համեմատությամբ տրված մեծությամբ՝ ելնելով բարձրությունների տարբերության տրված հավանականությունից.

դ) գնացքի եւ ջերմաստիճանային բեռնվածքների միաժամանակ ազդեցության դեպքում առանց կցվանքների ուղու կոնստրուկցիայով պետք է բացառվի ռելսակրճային վանդակների դուրս նետվելը.

ե) արհեստական կառուցվածքները պետք է ունենան սարքվածքներ, որոնք նախատեսված են այդ կառուցվածքների եւ ուղիների (մայթեր, ճաղաշարերով ապաստարաններ, կամրջի վրաքաշ, խորշեր, խցիկներ, սանդուղքներ, իջնելու տեղեր՝ ճաղաշարերով, դիտման հատուկ սարքվածքներ եւ հարմարանքներ, ազդանշանման ազդասարքեր եւ այլն) անվտանգ սպասարկման համար.

զ) սլաքային փոխադրիչները պետք է ունենան երկաթուղային շարժակազմի երթեւեկության ժամանակ լեզվակների եւ ուղեփոխիչի շարժական մասերի չարտոնված փոխադրումը կանխող սարքվածքներ.

է) լայնական հատման երկրաչափական չափսերը եւ թունելների կոնստրուկտիվ լուծումները պետք է սահմանվեն թունել մտնելիս եւ դրանում երկաթուղային շարժակազմի երթեւեկության ընթացում անբարձրագույն անվտանգության նվազագույնը հաշվի առնելով.

ը) երկաթուղային ուղու բաղկացուցիչ մասեր ներառող երկաթուղային տրանսպորտի օբյեկտների, ինչպես նաեւ երկաթուղային ուղու բացկացուցիչ մասերի տարրեր ներառող արտադրանքի նախագծման ժամանակ պետք է իրականացվեն հատուկ հետազոտություններ երկաթուղային շարժակազմի՝ առավելագույն արագությամբ անցնելու դեպքում թունելներում, փակ փորվածքներում եւ ստորգետնյա կայարաններում անբարձրագույն անվտանգության նվազագույնը հաշվի առնելով վերաբերյալ որոշումներ կայացնելու համար.

թ) թունելում վնասակար նյութերի պարունակությունը չպետք է գերազանցի մթնոլորտային օդում դրանց սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները.

ժ) երկաթուղային ուղիների՝ ավտոմոբիլային ճանապարհների եւ

քաղաքային ուղեւորատար տրանսպորտային գծերի հետ փոխհատումները պետք է նախագծվեն տարբեր մակարդակների վրա: Թույլատրվում է երկաթուղային ուղիների՝ ավտոմոբիլային ճանապարհների հետ նույն մակարդակի վրա փոխհատումների նախագծումը եւ կառուցումը ՄՄ անդամ պետությունների համապատասխան մարմինների կողմից սահմանված կարգով: Բոլոր երկաթուղային գծանցները ավտոճանապարհի կողմից պետք է սարքավորված լինեն նախագգուշական նշաններով, ինչպես նաեւ, կախված ավտոտրանսպորտի երթեւեկության ինտենսիվությունից, ազդանշանային եւ արգելափակիչ սարքվածներով: Արգելվում է երկաթուղային ուղիների՝ ավտոմոբիլային ճանապարհների հետ փոխհատումների նախագծումը եւ կառուցումը նույն մակարդակի վրա երկաթուղային ուղու այն ուղեմասերում, որոնց վրա շահագործվում է ավելի քան 140կմ/ժ արագությամբ ընթացող երկաթուղային շարժակազմը.

ժա) երկաթուղային ուղիների՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի կազմի մեջ մտնող եւ չմտնող տարբեր նշանակության խողովակաշարերի հետ փոխհատումը հնարավոր է վերգետնյա կամ ստորգետնյա (հողային պաստառի տակ) եղանակներով, այն դեպքում, երբ խողովակաշարն ավարտվի (ստորգետնյա եղանակի դեպքում) պաշտպանիչ խողովակի կամ թունելի մեջ՝ սահմանված երկարության եւ խորության պարագայում: Լիրաթմբի մարմնում խողովակաշարերի կցախողովակների տեղակայում չի թույլատրվում: Երկաթուղային ուղիների՝ խողովակաշարերի հետ վերգետնյա փոխհատման դեպքում պետք է ապահովվի կառույցների մոտեցման եզրաչափերի պահպանումը: Նշված փոխհատումների տեղակայումը համաձայնեցվում է երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի տիրապետողի հետ.

ժբ) երկաթուղային ուղիների այն ուղեմասերը, որտեղ հնարավոր է ձնահյուս, պետք է սարքավորված լինեն ձյունապահման սարքվածքներով.

24. Երկաթուղային էլեկտրամատակարարման, երկաթուղային

էլեկտրամատակարարման բաղկացուցիչ մասերի եւ երկաթուղային էլեկտրամատակարարման բաղկացուցիչ մասերի տարրերի անվտանգության ապահովման նպատակներով սահմանվում են հետեւյալ պահանջները՝

ա) պայմաններ, որոնց պահպանման դեպքում ապահովվում են՝

անվտանգ հեռավորություն՝ լարման տակ գտնվող երկաթուղային էլեկտրամատակարարման բաղկացուցիչ մասերի տարրերից մինչեւ հողանցված հատվածները, հողի մակերեսույթը, հետիոտնային կամուրջների, սանդուղքների, ուղեւորների համար նախատեսված կառամատուցների վրաքաշները եւ երկաթուղային գծանցները.

անվտանգ հեռավորություն՝ երկաթուղային էլեկտրամատակարարման բաղկացուցիչ մասերի տարրերից մինչեւ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի կազմի մեջ չմտնող էլեկտրահաղորդման գծերը.

թույլատրելի արժեքները չգերազանցող լարում՝ էլեկտրասարքավորումների եւ այլ մետաղական կոնստրուկցիաների կորպուսներին (հենամարմին) հավելու դեպքում.

պարիսպների եւ բլոկավորվածքների առկայություն, որոնք խոչընդոտում են վտանգավոր գոտիներ չարտոնված մուտքը կամ լարման տակ գտնվող երկաթուղային էլեկտրամատակարարման բաղկացուցիչ մասերի տարրերին հավելը.

երկաթուղային էլեկտրամատակարարման բաղկացուցիչ մասերի տարրերի կողմից ստեղծվող ռադիոխանգարումների՝ թույլատրելի արժեքները չգերազանցող մակարդակ.

քարշային ցանցի կամ էլեկտրահաղորդման գծերի ավտոմատ անջատում այնպիսի ռեժիմների ի հայտ գալու դեպքում, որոնք կարող են հանգեցնել երկաթուղային էլեկտրամատակարարման կամ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի այլ ենթահամակարգերի վնասմանը կամ սարքին վիճակի խաթարմանը.

նախազգուշացնող նշանների առկայություն.

հրդեհային անվտանգություն ինչպես նորմալ, այնպես էլ վթարային ռեժիմներում.

բ) այնպիսի սարքավորումների օգտագործում, որոնց պարամետրերը ապահովում են՝

թույլատրելից ոչ ցածր արժեք ունեցող մեկուսացման էլեկտրական ամրություն.

թույլատրելի արժեքը չգերազանցող անվանական հոսանքի դեպքում սարքավորման հոսանքատար մասերի ջերմաստիճանի գերազանցում՝ շրջակա միջավայրի ջերմաստիճանի համեմատությամբ.

մեկուսացման միջակայքի նվազագույն չափի, որի դեպքում առկա չէ հպումային ցանցի զատիչի անջատված վիճակի մասին ազդանշան, հարաբերակցություն թույլատրելից ոչ ցածր արժեք ունեցող մեկուսացման միջակայքի առավելագույն չափի հետ.

հպումային ցանցի հենարանների համար նախատեսված կանգնակների, հենարանների հիմքերի եւ կոշտ լայնադրակների պարզունակների ամրության անվտանգության՝ թույլատրելից ոչ ցածր արժեք ունեցող գործակից.

հպումային ցանցի կրող կոնստրուկցիաների միջնամասում թույլատրելից ոչ ցածր արժեք ունեցող ճկվածք.

դիողային հողակցիչի՝ թույլատրելից ոչ ցածր արժեք ունեցող հակառակ լարում.

կցվանքային կայարանների պաշտպանիչ սարքվածքների գործարկման՝ թույլատրելից ոչ ցածր արժեք ունեցող իմպուլսային լարում.

էլեկտրամագնիսական դաշտերի վտանգավոր եւ վնասակար ազդեցությունից պաշտպանության անհրաժեշտ մակարդակ.

երկաթուղային էլեկտրամատակարարման բաղկացուցիչ մասերի տարրերի ավտոմատ անջատում աշխատանքի վթարային ռեժիմում (գերբեռնվածություն, գերտաքացում, կարճ միակցում եւ այլն, որով բացառվում է դրա մասերի բռնկումը.

էլեկտրամագնիսական ճառագայթման թույլատրելի մակարդակը.

գ) երկաթուղային էլեկտրամատակարարման սարքավորումների մեխանիկական ամրության ապահովում հետեւյալների ազդեցության դեպքում՝
շահագործման բեռնվածքներ.

հաշվարկային վթարային ռեժիմների բեռնվածքներ.

մոնտաժային բեռնվածքների.

դ) շահագործման կամ վթարային բեռնվածքների եւ կլիմայական գործոնների միաժամանակ ազդեցության դեպքում երկաթուղային էլեկտրամատակարարման՝ շահագործման շրջանի համապատասխան նորմատիվային ցուցանիշներին համապատասխանող անվտանգ աշխատանքը, այդ թվում՝ նվազագույն ջերմաստիճանի, առավելագույն ջերմաստիճանի, քամու առավելագույն արագության եւ քամով ուղեկցվող մերկասառույցի ռեժիմների համար.

ե) հնարավոր՝ լարման տակ ընկնելուց եւ էլեկտրահարվելուց օպերատիվ եւ օպերատիվ-վերանորոգման աշխատանքներ իրականացնող անձնակազմի անվտանգության ապահովում հետեւյալների միջոցով՝

գատիչների տեղակայում՝ բաշխիչ սարքվածքների բոլոր շղթաների վրա տեսանելի կտրվածքների առկայության պարագայում (բացի գլորահանված բլոկների խորշերից), որոնք ապահովում են բոլոր ապարատների անջատման հնարավորություն լարման աղբյուրներից.

քարշային եւ տրանսֆորմատորային ենթակայանների 1000 Վ-ից ավելի լարում ունեցող բոլոր բաշխիչ սարքվածքների, այդ թվում՝ երկաթուղային

էլեկտրամատակարարման բաղկացուցիչ մասերի գծային տարրերի սարքավորում ապարատների եւ հաղորդաձողավորման հողակցումն ապահովող մնայուն հողակցման դանակներով, ինչպես նաեւ կոմուտացման ապարատների հետ կապված հնարավոր սխալ գործողությունների կատարումը կանխող բլոկավորումներով կամ այլ սարքվածքներով.

տրանսֆորմատորների վրա բարձրանալու համար մնայուն պարիսպների եւ սանդուղքների սարքավորում բլոկավորումներով կամ այլ սարքվածքներով, որոնք ապահովում են պարիսպների բացվելու, սանդուղքները աշխատանքային վիճակի բերելու հնարավորությունը միայն միացված հողակցման դանակների դեպքում.

զ) երկաթուղային էլեկտրամատակարարման բաղկացուցիչ մասերի տարրերի միջոցով քարշային շարժակազմի, երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի ենթահամակարգերի կառուցվածքների եւ սարքվածքների համար որակի ցուցանիշներին համապատասխանող եւ դրանց անվտանգ աշխատանքը եւ էներգաարդյունավետության բարձրացումն ապահովող էլեկտրաէներգիայի մատակարարում:

25. Երկաթուղային ավտոմատիկայի եւ հեռուստամեխանիկայի, երկաթուղային ավտոմատիկայի եւ հեռուստամեխանիկայի բաղկացուցիչ մասերի, ինչպես նաեւ երկաթուղային ավտոմատիկայի եւ հեռուստամեխանիկայի բաղկացուցիչ մասերի տարրերի անվտանգության ապահովման նպատակներով սահմանվում են հետեւյալ պահանջները՝

ա) ավտոմատիկայի եւ հեռուստամեխանիկայի բոլոր բաղկացուցիչ մասերը, ինչպես նաեւ ավտոմատիկայի եւ հեռուստամեխանիկայի բաղկացուցիչ մասերի տարրերը պետք է ապահովեն սահմանված արագությամբ եւ շարժման նվազագույն միջակայքով ընթացող երկաթուղային շարժակազմի անվտանգ երթեւեկությունը.

բ) կարգավարական կենտրոնացումը եւ գնացքների երթեւեկության նկատմամբ կարգավարական հսկողությունը պետք է ապահովեն՝

երկաթուղային ուղու մեկ կամ մի քանի կայարանների եւ կայարանամեջերի սլաքների եւ լուսացույցների կենտրոնացած կառավարումը մեկ կարգավարական կենտրոնից՝ այդ կայաններում եւ ուղեսպասարկիչ կետերում էլեկտրական կենտրոնացման սարքվածքների պահեստային կառավարման ապահովմամբ.

սլաքների դիրքի, կայարանամեջերի, կայարանային ուղիների եւ կայարաններին հարող բլոկ-տեղամասերի ազատ (զբաված) լինելու, ինչպես նաեւ մուտքի, երթուղային եւ ելքի լուսացույցների ցուցիչների նկատմամբ անընդմեջ հսկողությունը.

ազդանշանային, կենտրոնացման եւ բլոկավորման սարքվածքների տեխնիկական վիճակի անընդմեջ հսկողությունը կայարաններում եւ կայարանամեջերում.

բլոկ-տեղամասերի զբաղված լինելու մասին սխալ տեղեկությունների դեպքում շարժման պարամետրերը փոխելու հնարավորությունը, այդ թվում՝ երկաթուղային շարժակազմի արտակարգ կանգառում եւ արգելող ցուցիչով լուսացույցն անցնելու համար երկաթուղային շարժակազմի համար թույլտվության հանձնում.

ուղեորներին գնացքների շարժվելու մասին, ինչպես նաեւ երկաթուղային ուղիների վրա աշխատանքներ կատարող աշխատողներին գնացքի մոտենալու մասին ազդարարելու համար անհրաժեշտ տվյալների տրամադրումը.

գ) կայաններում եւ կայարանամեջերում ազդանշանումը, կենտրոնացումը եւ բլկավորումը պետք է ապահովեն՝

գնացքների անցնելը դեպի կայարաններ երկու ուղղություններով եւ կայարանամեջերի յուրաքանչյուր ուղով սահմանված արագությամբ եւ չհատվող երթուղիներով.

մեկ այլ երկաթուղային շարժակազմի կողմից զբաղեցված երկաթուղային ուղու՝ այդ հատված երկաթուղային շարժակազմի մուտքը կանխելը (բլոկավորելը).

երկաթուղային շարժակազմի դիրքի, սլաքների փոխման, դրանց դիրքի եւ երթուղու նախապատրաստման դեպքում արտաքին փակման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաեւ լուսացույցների կառավարումը եւ փոխադարձ կախում ունեցող գործողությունների՝ պահանջվող հաջորդականությամբ կատարումը.

տեխնիկական միջոցների եւ սարքվածքների տեխնիկական վիճակի հսկողությունը, անհրաժեշտության դեպքում՝ դրանց պահեստավորումը.

երկաթուղային կայարաններում գնացքի մոտենալու մասին ավտոմատ ազդարարումը.

երկաթուղային շարժակազմի տակ սլաքների փոխադրումը թույլ չտալը.

դ) տեսակավորման կայարաններում երկաթուղային ավտոմատիկան եւ հեռուստամեխանիկան պետք է ապահովեն՝

կազմերի անընդմեջ, անխափան եւ անվտանգ կազմավորումը՝ հաշվարկային (նախագծային) արագությամբ, վագոնների տեսակավորման անվտանգությունը.

սլաքների անհատական կառավարումը

դեպի վերախմբավորման գոտի երկաթուղային շարժակազմի ելքի բացառումը.

սլաքների դիրքի եւ սլաքային հասվածամասերի բեռնվածության հսկողությունը.

երկաթուղային շարժակազմի տակ սլաքների փոխադրումը թույլ չտալը.

վրաշարժի եւ վերախմբավորման կառավարումը եւ հսկողությունը.

ե) տեխնիկական դիագնոստիկայի եւ մոնիթորինգի համակարգը պետք է ապահովի երկաթուղային ավտոմատիկայի եւ հեռուստամեխանիկայի վիճակի հսկողությունը՝ նախքան խափանումը.

զ) երկաթուղային ավտոմատիկան եւ հեռուստամեխանիկան պետք է համատեղելի լինեն երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի մյուս ենթահամակարգերի եւ երկաթուղային շարժակազմի հետ.

է) երկաթուղային ավտոմատիկան եւ հեռուստամեխանիկան, երկաթուղային ավտոմատիկայի եւ հեռուստամեխանիկայի բաղկացուցիչ մասերը, ինչպես նաեւ երկաթուղային ավտոմատիկայի եւ հեռուստամեխանիկայի բաղկացուցիչ մասերի տարրերը, նախագծման ժամանակ նախատեսված բոլոր պայմանների եւ ռեժիմների ժամանակ եւ դրանց համար սահմանված ծառայության ժամկետների ընթացքում, պետք է պահպանեն իրենց աշխատունակ վիճակը:

26. Երկաթուղային էլեկտրակապի, երկաթուղային էլեկտրակապի բաղկացուցիչ մասերի եւ երկաթուղային էլեկտրամատակարարման բաղկացուցիչ մասերի տարրերի անվտանգության ապահովման նպատակներով սահմանվում են հետեւյալ պահանջները՝

ա) երկաթուղային էլեկտրակապը, երկաթուղային էլեկտրակապի բաղկացուցիչ մասերը, ինչպես նաեւ երկաթուղային էլեկտրակապի բաղկացուցիչ մասերի տարրերը պետք է ապահովեն սահմանված արագությամբ եւ շարժման նվազագույն միջակայքով ընթացող երկաթուղային շարժակազմի անվտանգ երթեւեկությունը.

բ) երկաթուղային էլեկտրակապը, երկաթուղային էլեկտրակապի բաղկացուցիչ մասերը եւ երկաթուղային էլեկտրակապի բաղկացուցիչ մասերի տարրերը պետք է ապահովեն աշխատանքային պարամետրերի, ինչպես նաեւ կապի տեխնոլոգիական ցանցի ինտեգրված կառավարման մոնիթորինգը եւ հաճախ-ժամանակային համաժամացումը.

գ) երկաթուղային էլեկտրակապը, երկաթուղային էլեկտրակապի բաղկացուցիչ մասերը եւ երկաթուղային էլեկտրակապի բաղկացուցիչ մասերի տարրերը պետք է համատեղելի լինեն երկաթուղային տրանսպորտի

ենթակառուցվածքի մյուս ենթահամակարգերի եւ երկաթուղայի շարժակազմի հետ.

դ) երկաթուղային էլեկտրակապը, երկաթուղային էլեկտրակապի բաղկացուցիչ մասերը եւ երկաթուղային էլեկտրակապի բաղկացուցիչ մասերի տարրերը նախագծման ժամանակ նախատեսված բոլոր պայմանների եւ ռեժիմների դեպքում եւ դրանց համար սահմանված ծառայության ժամկետների ընթացքում, պետք է պահպանեն իրենց աշխատունակ վիճակը:

27. Կայարանային շենքերի, կառուցվածքների եւ սարքվածքների, կայարանային շենքերի, կառուցվածքների եւ սարքվածքների բաղկացուցիչ մասերի, ինչպես նաեւ կայարանային շենքերի, կառուցվածքների եւ սարքվածքների բաղկացուցիչ մասերի տարրերի անվտանգության ապահովման նպատակներով սահմանվում են հետեւյալ պահանջները՝

ա) կայարանային շենքերը, կառուցվածքները եւ սարքվածքները պետք է հարմարեցված լինեն ուղեւորներին նստեցնելու, իջեցնելու եւ սպասարկելու հետ կապված գործողությունների անվտանգ կատարման համար: Ուղեւորների համար նախատեսված շենքերից դեպի ուղեւորների համար նախատեսված կառամատույցներ, ուղեւորների համար նախատեսված կառամատույցներից դեպի հետիոտնային կամուրջներ եւ թունելային անցումներ ելքերը չպետք է սահմանափակված լինեն ֆունկցիոնալ առումով մարդկանց անվտանգության հետ կապ չունեցող այլ շենքերով, կառուցվածքներով եւ սարքվածքներով եւ պետք է ունենան մանկասայլակներով մարդկանց, ինչպես նաեւ սահմանափակ շարժունակությամբ քաղաքացիների շարժման համար նախատեսված սարքավորումներ.

բ) հետիոտնային կամուրջները եւ ստորգետնյա կայարանները պետք է ունենան վթարային լուսավորություն եւ վթարային ելքեր.

գ) սլաքների էլեկտրական կենտրոնացում ունեցող կայարանները, թունելները եւ կամուրջները պետք է սարքավորված լինեն երկաթուղային

ուղիների վրա աշխատանքներ կատարող աշխատողներին գնացքի մոտենալու մասին ազդարարելու համակարգով.

դ) մնայուն կերպով տեղակայված կառուցվածքները եւ դրանց առանձին տարրերը պետք է ապահովեն կառույցների՝ մոտեցման սահմանված եզրաչափքը եւ բեռնման եզրաչափքերը (այդ թվում՝ արտաչափային բեռների փոխադրման ժամանակ)՝ երկաթուղային շարժակազմի եւ փոխադրվող բեռների տարրերի հետ նշված կառուցվածքների եւ դրանց առանձին տարրերի անմիջական շփումը բացառելու նպատակով.

ե) երկաթուղային կայարանները պետք է ունենան դեպի գնացքների ընթացուղիներ երկաթուղային շարժակազմի ինքնաբերական ելքի մասին նախազգուշացնող սարքվածքներ՝ ապահովիչ փակուղիներ, պահպանիչ սլաքներ, արտանետող կալուններ կամ արտանետող լեզվակներ, որոնք պետք է համապատասխանեն դրանք կենտրոնացման եւ բլոկավորման համակարգեր ներառելուն ներկայացվող պահանջներին, ունենան արգելափակող դիրքի նկատմամբ հսկողության հնարավորություն եւ բացառեն երկաթուղային շարժակազմի ինքնաբերական ելքը դեպի գնացքների ընդունման, ուղարկման այլ երթուղիներ եւ ընթացուղիներ.

զ) երկարաձիգ թեքություններ ունեցող կայարանամեջերը, ինչպես նաեւ այդ կայարանամեջերը սահմանափակող կայարանները այդ թեքություններով երթելիկելու ժամանակ կառավարումը կորցրած գնացքը կամ գնացքի մասերը կանգնեցնելու համար պետք է ունենան որսիչ փակուղիներ կամ այլ կառուցվածքներ եւ սարքվածքներ.

է) բեռնատար սարքվածքները բեռնման եւ բեռնաթափման գործողությունների կատարման համար նախատեսված բոլոր պայմաններում պետք է բացառեն երկաթուղային շարժակազմի վնասումը, ունենան օրվա մութ ժամերին բեռների անվտանգ բեռնումը եւ բեռնաթափումն ապահովող լուսավորություն, ինչպես նաեւ ապահովեն անձնակազմի անվտանգությունը եւ

փոխադրվող բեռների պահպանվածությունը.

ը) երկաթուղային կայարանները, դեպոները եւ մյուս օժանդակ օբյեկտները պետք է ունենան երկաթուղային ուղիներով անցնող, վրաքաշներով, ցուցատախտակներով եւ նախազգուշացնող գրություններով սարքավորված ծառայողական հետիոտնային անցումներ, ինչպես նաեւ էլեկտրական լուսավորություն: Երկաթուղային ուղիների մոտակայքում գտնվող ծառայողական շենքերի ելքերը պետք է ունենան պարիսպներ (արգելապատեր):

թ) երկաթուղային կայարանները սահմանված վայրերում պետք է ունենան բաց աշխատանքային հարթակներ եւ անվտանգության կղզյակներ՝ գնացքները կազմող, վագոնների երթելեկության արագությունը կարգավորող անձանց, սլաքային պահակակետերի հերթապահների, վագոնները զննող, բեռը, փոստային առաքանիները եւ ուղեբեռն ընդունող եւ հանձնող անձանց, ինչպես նաեւ գնացքաքարշերը (լոկոմոտիվները) եւ վագոնները հանդերձավորող անձանց եւ այլ աշխատողների անվտանգությունն ապահովելու համար.

ժ) երկաթուղային կայարաններում գտնվող օբյեկտները եւ շինությունները պետք է լուսավորվեն սահմանված նորմերին համապատասխան՝ երկաթուղային գծանցներում գնացքների, ավտոտրանսպորտային միջոցների անվտանգ երթելեկությունը, մանևրային տեղաշարժերը, վագոններ նստեցնելիս եւ վագոններից իջնելիս ուղեւորների անվտանգությունը, աշխատողների անվտանգությունը, բեռների, փոստային առաքանիների, ուղեբեռի, բեռնաձանրոցի պահպանությունն ապահովելու համար: Արտաքին լուսավորությունը չպետք է ազդի ազդանշանային լույսերի հստակ տեսանելիության վրա.

ժա) օդանշական գործողության վագոնային դանդաղացուցիչների սեղմված օդի արտաթողման վայրերը՝ տեսակավորման թեքուղիների վրա, ճնշակային սարքվածքների օդ ներծծող հատվածքները, ինչպես նաեւ շարժիչների եւ այլ սարքավորումների՝ գազի արտաթողման համակարգերը պետք է

սարքավորված լինեն աերոդինամիկական աղմուկի եւ գազի հոսքերի խլացուցիչներով, ինչպես նաեւ այլ պաշտպանիչ սարքավածներով.

ժբ) երկաթուղային կայարանների բկանցքներում էլէկտրահաղորդման օդային գծերը չպետք է հատվեն երկաթուղային ուղիների հետ.

ժգ) այն երկաթուղային կայարանների համար, որտեղ գործողություններ են իրականացվում վտանգավոր բեռների հետ, պետք է նախատեսվեն հատուկ միջոցներ՝ ուղղված քաղաքացիների կյանքի եւ առողջության, ֆիզիկական կամ իրավաբանական անձանց գույքի, պետական կամ համայնքային գույքի պահպանությանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը:

Հոդված 5. Անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովումը

1. Կամավոր հիմունքով կիրառվող ստանդարտներով նախատեսված՝ արտադրանքի անվտանգության թույլատրելի արժեքների (այսուհետ՝ թույլատրելի արժեքներ) ապահովումը բավարար պայման է ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների կատարման համար:

2. ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի հետ փոխկապակցված ստանդարտների ցանկերը հաստատում է ՄՄ հանձնաժողովը (այսուհետ՝ ՄՄՀ):

3. Ստանդարտացման միջպետական փաստաթղթերում անվտանգության պահանջներին առնչվող փոփոխություններ կատարելիս փոփոխություններն առաջարկող կողմը պետք է կատարի ռիսկերի հաշվարկներ՝ ներառելով ապացույցներ կատարված փոփոխությունների անվտանգության վերաբերյալ:

Հոդված 6. Համապատասխանության գնահատումը

1. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների համապատասխանության գնահատումն իրականացվում է «Շենքերի եւ

կառուցվածքների անվտանգության մասին» ՄՄ տեխնիկական կանոնակարգին համապատասխան՝ հաշվի առնելով երկաթուղային տրանսպորտի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածի 73-81-րդ կետերում նշված առանձնահատկությունները:

2. Արտադրանքի համապատասխանության գնահատումն իրականացվում է համապատասխանության պարտադիր հավաստման ձեռով:

3. Նախագծային փաստաթղթերի պետական փորձաքննությունն իրականացվում է ՄՄ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտները շահագործման ընդունելու ժամանակ սահմանվում է դրանց համապատասխանությունը հաստատված նախագծային փաստաթղթերին՝ հաշվի առնելով դրանցում սահմանված կարգով կատարված փոփոխությունները, ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգին, ստանդարտացման միջպետական փաստաթղթերին:

4. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտները շահագործման ընդունելու ժամանակ պետք է հաշվի առնվեն երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների կառուցման ժամանակ իրականացվող տեխնոլոգիական գործողությունների նկատմամբ (ընդունող հանձնաժողովների) շինարարական հսկողության արդյունքները:

Շինարարական հսկողությունն իրականացվում է ՄՄ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

5. Շահագործման ընդունելու ենթակա երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների ցանկը ներկայացված է 2-րդ հավելվածում:

Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների՝ շահագործման ընդունելու եւ շահագործման մեջ դնելու կարգը ներկայացված է սույն հոդվածի 73-81-րդ կետերում:

6. Արտադրանքի համապատասխանության պարտադիր հավաստումն իրականացվում է հետևյալ ձևերով՝

ա) սերտիֆիկացում.

բ) համապատասխանության մասին հայտարարագրի ընդունում (այսուհետ՝ համապատասխանության հայտարարագրում):

7. Մաքսային միության շրջանակներում ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման (հավաստման) աշխատանքներն իրականացնում են Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված՝ հավատարմագրված սերտիֆիկացման (համապատասխանության (հավաստման) գնահատման) մարմինները (այսուհետ՝ սերտիֆիկացման մարմիններ):

8. Սերտիֆիկացման իրականացման ժամանակ արտադրանքի պարամետրերի անհրաժեշտ փորձարկումները եւ չափումները կատարվում են Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում ընդգրկված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) կողմից (այսուհետ՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներ (կենտրոններ)):

Հավատարմագրված փորձարկման լաբորատորիան (կենտրոնը) իրականացնում է արտադրանքի հետազոտություններ (փորձարկումներ), որն ընդգրկված է հավատարմագրման իրենց ոլորտում՝ սերտիֆիկացման մարմնի հետ կնքված պայմանագրի պայմաններով: Հավատարմագրված փորձարկման լաբորատորիաները (կենտրոնները) հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների արդյունքները ձեւակերպում են փորձարկումների համապատասխան արձանագրություններով եւ դրանք հանձնում սերտիֆիկացման մարմիններին: Սերտիֆիկացման մարմինները, սույն հոդվածի 24-72-րդ կետերում շարադրված

սերտիֆիկացման իրականացման կարգին համապատասխան, ընդունում են համապատասխանության սերտիֆիկատ տրամադրելու կամ տրամադրելը մերժելու մասին որոշում:

Փորձարկումների ժամանակ կիրառվող չափումների միջոցները պետք է համապատասխանեն ՄՄ անդամ պետության՝ չափումների միասնականության ապահովման մասին օրենսդրության պահանջներին:

9. Արտադրանքի համապատասխանության գնահատման ժամանակ ստանդարտների դրույթների կիրառման դեպքում սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին դրա համապատասխանության գնահատումը կարող է իրականացվել այդ ստանդարտները հաշվի առնելով: Ստանդարտները չկիրառելը չի կարող գնահատվել որպես սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջների չպահպանում: Այդ դեպքում սույն հոդվածի 21-րդ կետին համապատասխան՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի համապատասխանությունը գնահատելու համար թույլատրվում է կիրառել այլ փաստաթղթեր:

10. Սերտիֆիկացման ենթակա արտադրանքի ցանկը ներկայացված է 3-րդ հավելվածում:

Համապատասխանության հայտարարագրման ենթակա արտադրանքի ցանկը ներկայացված է 4-րդ հավելվածում:

Սերտիֆիկացում անցկացնելու կարգը ներկայացված է սույն հոդվածի 24-72-րդ կետերում:

11. Արտադրանքի սերտիֆիկացման սխեմաների ցանկը ներկայացված է 5-րդ հավելվածում:

12. ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով պատրաստողը փորձահավանության արժանացած մեթոդակարգով իրականացնում է ընդունման, հանձնման-ընդունման, պարբերական եւ տիպային փորձարկումներ:

13. Սերտիֆիկացումն իրականացվում է սերտիֆիկացման մարմնի կողմից՝ հայտատուի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

Սերտիֆիկացման ժամանակ հայտատու կարող է լինել ՄՄ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ՄՄ-ի տարածքում գրանցված իրավաբանական անձը (ֆիզիկական անձը՝ որպես անհատ ձեռնարկատեր), որը պատրաստող կամ վաճառող կամ, մատակարարվող արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության ապահովման եւ մատակարարվող արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին անհամապատասխանության համար պատասխանատվության մասով իր հետ կնքված պայմանագրի հիման վրա օտարերկրյա պատրաստողի գործառույթներ իրականացնող անձ է:

14. Փորձարկումների տեսակներն ու ծավալը որոշվում են հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններով եւ մեթոդներով, այդ թվում՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգը կիրառելու ու կատարելու եւ ՄՄՀ-ի կողմից հաստատվող ցանկով համապատասխանության գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ նմուշառման կանոններ պարունակող ստանդարտներով:

Համապատասխանության գնահատման աշխատանքների իրականացման ժամկետները սահմանվում են սերտիֆիկացման մարմնի եւ հայտատուի միջեւ կնքված պայմանագրով:

Համապատասխանության սերտիֆիկատի տրամադրման ժամկետը չպետք է գերազանցի սերտիֆիկացման մարմնի կողմից փորձարկումների արձանագրությունները եւ, անհրաժեշտության դեպքում, սերտիֆիկացման ժամանակ հայտնաբերված անհամապատասխանությունների վերացման մասին փաստաթղթերն ստանալու ամսաթվից՝ 15 աշխատանքային օրը:

Համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը կազմում է 5 տարուց ոչ ավելի:

15. Հայտարարագրման ժամանակ հայտատու կարող է լինել ՄՄ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ՄՄ-ի տարածքում գրանցված իրավաբանական անձը (ֆիզիկական անձը՝ որպես անհատ ձեռնարկատեր), որը պատրաստող կամ վաճառող կամ մատակարարվող արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության ապահովման եւ մատակարարվող արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին անհամապատասխանության համար պատասխանատվության մասով իր հետ կնքած պայմանագրի հիման վրա օտարերկրյա պատրաստողի գործառույթներն իրականացնող անձ է:

16. Համապատասխանության հայտարարագրումը ներառում է հետեւյալ տեսակի աշխատանքները՝

ա) համապատասխանության մասին հայտարարագիր ընդունող հայտատուի կողմից արտադրանքի համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի լրակազմի ձեւավորումը.

բ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) արտադրանքի նմուշի փորձարկումը, եթե դա նախատեսված է հայտարարագրման սխեմայով.

գ) հայտատուի կողմից որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին հայտ ներկայացնելը եւ որակի կառավարման համակարգի սերտիֆիկացման անցկացումը, եթե դա նախատեսված է հայտարարագրման սխեմայով.

դ) հայտատուի կողմից համապատասխանության մասին հայտարարագրի ընդունումը.

ե) համապատասխանության մասին հայտարարագրի եւ կից փաստաթղթերի գրանցման համար սերտիֆիկացման մարմին հայտ ներկայացնելը.

զ) սերտիֆիկացման մարմնի կողմից՝ ներկայացված փաստաթղթերի

ամբողջականության, ինչպես նաև համապատասխանության մասին հայտարարագրի լրացման ճշտության ստուգումը.

է) համապատասխանության մասին հայտարարագրի գրանցումը.

ը) համապատասխանության հայտարարագրման արդյունքների մասին տեղեկացնելը.

թ) որակի կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի կողմից որակի կառավարման համակարգի նկատմամբ տեսչական հսկողությունը, եթե դա նախատեսված է հայտարարագրման սխեմայով.

ժ) այն արտադրանքի նկատմամբ հսկողությունը, որի համապատասխանությունը հավաստված է համապատասխանության մասին հայտարարագրով:

17. Համապատասխանության հայտարարագրման ժամանակ համապատասխանության մասին հայտարարագիր ընդունող հայտատուն, սեփական ապացույցների հիման վրա, ինքնուրույն ձեւավորում է ապացուցողական նյութերի լրակազմը, որը պարունակում է՝

ա) հիմնադիր փաստաթղթերը.

բ) կոնստրուկտորական եւ տեխնոլոգիական փաստաթղթերը.

գ) անվտանգության հիմնավորումը.

դ) արտադրանքի տիպային նմուշների ընտրության մասին ակտը.

ե) հայտատուի սեփական լաբորատորիայում ստացված արտադրանքի փորձարկման արձանագրությունները.

զ) կազմակերպության ստանդարտը կամ տեխնիկական պայմանները, որոնցով արտադրվում է արտադրանքը.

է) արտադրանքի անվտանգության վրա ընդհանուր առմամբ ազդող բաղկացուցիչ մասերի անվտանգությունը հավաստող փաստաթղթերը.

ը) որակի կառավարման այն համակարգի սերտիֆիկատը, որի համար նշված սերտիֆիկատը տրամադրած սերտիֆիկացման մարմնի կողմից նախատեսվում է սերտիֆիկացված արտադրանքի նկատմամբ տեսչական հսկողություն.

թ) այլ փաստաթղթեր (փորձահավանության արժանացած մեթոդակարգով իրականացված հաշվարկների, անալոզների շահագործման արդյունքներ), որոնք հայտատուի կողմից օգտագործվել են արտադրանքի համապատասխանությունը հավաստելու համար.

18. Արտադրանքի համապատասխանության հայտարարագրման ժամանակ հայտատուն, սեփական եւ սերտիֆիկացման մարմնի եւ (կամ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) մասնակցությամբ ձեռք բերված ապացույցների հիման վրա, ի լրումն սույն հոդվածի 17-րդ կետին համապատասխան ձեւավորված սեփական ապացույցների, ապացուցողական նյութերում ներառում է հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) անցկացված հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների արձանագրությունները:

Համապատասխանության հայտարարագրման ժամանակ արտադրանքի նույնականացումն իրականացնում է հավատարմագրված փորձարկման լաբորատորիան(կենտրոնը): Փորձարկումներ կատարելու նպատակով արտադրանքի նմուշառումն իրականացվում է հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ եւ մեթոդներ, այդ թվում՝ ՄՄ սույն տեխնիկական կանոնակարգը կիրառելու ու կատարելու եւ ՄՄՀ-ի կողմից հաստատվող ցանկով համապատասխանության գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ նմուշառման կանոններ պարունակող ստանդարտներով սահմանված պահանջներին համապատասխան: Փորձարկումներ կատարելու նպատակով վերցված արտադրանքի նմուշները պետք է կառուցվածքով, կազմով եւ պատրաստման տեխնոլոգիայով լինեն սպառողին (պատվիրատուին) մատակարարվող արտադրանքի հետ նույնական:

Համապատասխանության հայտարարագրման սխեմաների ցանկը ներկայացված է 6-րդ հավելվածում:

19. Համապատասխանության մասին հայտարարագրի գործողության ժամկետը կազմում է 5 տարուց ոչ ավելի:

20. Պատրաստողի կողմից համապատասխանության մասին հայտարարագրերի եւ (կամ) համապատասխանության սերտիֆիկատների վավերացված պատճենները կցվում են արտադրանքն ուղեկցող փաստաթղթերին:

21. Այն դեպքում, երբ հայտատուն արտադրանքի համապատասխանությունը հավաստելիս չի կիրառում կամ մասամբ է կիրառում ստանդարտները, ապա հայտի հետ միասին նա ներկայացնում է՝

ա) արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության ապացույց.

բ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում (կենտրոններում)իրականացված հետազոտությունների (փորձարկումների) մասին տեղեկություններ.

գ) որակի կառավարման համակարգի համապատասխանության սերտիֆիկատ:

22. Նորարարական արտադրանքի սերտիֆիկացման համար հայտատուն հայտն ուղարկում է սերտիֆիկացման մարմին եւ ներկայացնում տեխնիկական փաստաթղթեր, այդ թվում՝ առաջարկվող նորարարական արտադրանքի տեխնիկական լուծումների անվտանգության մասին հիմնավորում: Սերտիֆիկացման մարմինն ուսումնասիրում է ներկայացված նյութերը եւ անվտանգության պահանջների թույլատրելի ցուցանիշներից շեղումների առկայության դեպքում դրանց ճշգրտման վերաբերյալ առաջարկն ուղարկում է ՄՄ անդամ պետությունների՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտում պետական քաղաքականության մշակման եւ նորմատիվ-հրավական կարգավորման

գործառույթներ իրականացնող մարմիններին:

ՄՄ անդամ պետությունների՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտում պետական քաղաքականության մշակման եւ նորմատիվ-իրավական կարգավորման գործառույթներ իրականացնող մարմինները նշված արժեքների մասին հիմնավորումների հիման վրա ՄՄ անդամ պետությունների կողմից սահմանված կարգով մշակում եւ հաստատում են անվտանգության ապահովման նպատակով նորարարական արտադրանքի փորձնական խմբաքանակին ներկայացվող պահանջները, այդ թվում՝ հսկողության մեթոդներ եւ նորարարական արտադրանքի անվտանգության ապացույցների համար անհրաժեշտ փորձարկումների ծավալը սահմանող ստանդարտներ:

Սերտիֆիկացման մարմինը նորարարական արտադրանքի փորձարկումների դրական արդյունքների հիման վրա եւ հաստատված ստանդարտներին համապատասխան որոշում է կայացնում հայտատուին նորարարական արտադրանքի խմբաքանակի համար համապատասխանության սերտիֆիկատ տրամադրելու մասին: Համապատասխանության սերտիֆիկատում նշվում է նորարարական արտադրանքի նմուշների թիվը եւ համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը: Նորարարական արտադրանքի նմուշների համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը պետք է կազմի 2 տարուց ոչ ավելի:

23. Հայտատուն, ՄՄ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, իրավունք ունի սերտիֆիկացման մարմինների եւ հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ բողոքներով դիմել համատարմագրման մարմին:

24. Սերտիֆիկացման անցկացման ընթացակարգը ներառում է՝

ա) հայտատուի կողմից սերտիֆիկացման մարմին արտադրանքի սերտիֆիկացում անցկացնելու մասին հայտ ներկայացնելը.

բ) սերտիֆիկացման մարմնի կողմից սերտիֆիկացում անցկացնելու մասին հայտը գնահատելը, նշված հայտի վերաբերյալ որոշում կայացնելը եւ հայտատուին այդ որոշումն ուղարկելը.

գ) սերտիֆիկացման մարմնի հետ կնքված պայմանագրի հիման վրա հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) արտադրանքի փորձարկումների անցկացումը.

դ) արտադրանքի արտադրության վիճակի ստուգումը կամ որակի կառավարման համակարգի կամ էլ արտադրանքի արտադրության սերտիֆիկացումը, եթե դա նախատեսված է սերտիֆիկացման սխեմայով.

ե) փորձարկումների արդյունքների փորձաքննությունը, արտադրանքի արտադրության վիճակի ստուգման կամ որակի կառավարման համակարգի կամ էլ արտադրանքի արտադրության սերտիֆիկացման (դրանց անցկացման դեպում) եւ մյուս ապացուցողական նյութերի փորձաքննությունը, ինչպես նաեւ համապատասխանության սերտիֆիկատ տալու մասին որոշման ընդունումը կամ համապատասխանության սերտիֆիկատ տալու մերժման հիմնավորումը.

զ) համապատասխանության սերտիֆիկատի ձեւակերպումը, գրանցումը եւ հանձնումը կամ հայտատուին համապատասխանության սերտիֆիկատ տալու մերժումն ուղարկելը.

է) տեսչական հսկողության իրականացումը՝ սերտիֆիկացման սխեմաներին համապատասխան, ինչպես նաեւ համապատասխանության սերտիֆիկատի եւ ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի կիրառումը:

25. Սերտիֆիկացում անցկացնելու մասին հայտը հայտատուի կողմից ձեւակերպվում է ռուսերենով եւ, անհրաժեշտության դեպքում, ՄՄ անդամ պետությունների պետական լեզվով (լեզուներով) եւ պետք է ներառի՝

ա) հայտատուի անվանումը, գտնվելու վայրը եւ վավերապայմանները.

բ) պատրաստողի անվանումը, գտնվելու վայրը եւ վավերապայմաններն այն դեպքում, երբ հայտատուն արտադրանքը պատրաստողը չէ.

գ) արտադրանքի մասին տեղեկությունները եւ դրա նույնականացնող նշանները (անվանումը, ծածկագիրը՝ ըստ ՄՄ արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ՄՄ ԱՏԳ ԱԱ), արտադրանքի տեխնիկական նկարագիրը, դրա կիրառման (շահագործման) վերաբերյալ ցուցումները եւ սույն հոդվածի 26-րդ եւ 28-րդ կետերին համապատասխան արտադրանքը նկարագրող տեխնիկական մյուս փաստաթղթերը, ինչպես նաեւ հայտարարագրվող քանակը (սերիական արտադրությունը, արտադրանքի խմբաքանակը կամ միավորը).

դ) մատնանշում ՄՄ սույն տեխնիկական կանոնակարգի այն դրույթներին, որոնց պահանջներին համապատասխանում է ներկայացվող արտադրանքը.

ե) սերտիֆիկացման սխեման.

զ) հայտատուի՝ սերտիֆիկացման կանոններն ու պայմանները կատարելու պարտավորությունը.

է) լրացուցիչ տեղեկություններ՝ հայտատուի հայեցողությամբ.

ը) հայտին կցվող փաստաթղթերի ցանկը:

26. Նորից մշակվող արտադրանքի համար սերտիֆիկացում անցկացնելու մասին հայտի հետ հայտատուն սերտիֆիկացման մարմին է ներկայացնում հետեւյալ փաստաթղթերը՝

ա) արտադրանքի նմուշի ստեղծման տեխնիկական առաջադրանքը (դրա առկայության դեպքում).

բ) արտադրանքի տեխնիկական պայմանները.

գ) նախնական փորձարկումների ծրագիրը.

դ) նախնական փորձարկումների արձանագրությունը.

ե) հաշվի առնված շահագործման փաստաթղթերի փաթեթը.

զ) ընդունման փորձարկումներ անցկացնելու համար արտադրանքի նմուշի պատրաստ լինելու մասին ակտը.

է) ընդունման փորձարկումներ անցկացնելու ծրագիր-ժամանակացույցը.

ը) ընդունման փորձարկումների ծրագիրը.

թ) ընդունման փորձարկումների արձանագրությունը.

ժ) ընդունող հանձնաժողովի ակտը.

ժա) ընդունող հանձնաժողովի կողմից հայտնաբերված թերությունների (առկայության դեպքում) վերացման միջոցառումների ծրագիրը եւ դրա իրականացումը հավաստող փաստաթղթերը.

ժբ) ստուգումն ավարտելու եւ սերիական արտադրության արտադրանքի կոնստրուկտորական փաստաթղթերի հսկիչ լրակազմով սահմանված կարգով հաստատելու մասին ծանուցումը.

ժգ) ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի զետեղման եղանակի եւ տեղի մասին առաջարկությունը:

27. Ընդունման եւ սերտիֆիկացման փորձարկումները համատեղելու մասին որոշում ընդունելու դեպքում սույն հոդվածի 26-րդ կետի «բ», «ե», «թ» – «ժա» ենթակետերում նշված փաստաթղթերը ներկայացվում են ընդունման փորձարկումների անցկացումից եւ հայտնաբերված թերությունների վերացման միջոցառումների ծրագրի իրականացումից հետո:

28. Սերիական թողարկման արտադրանքի համար սերտիֆիկացում անցկացնելու մասին հայտի հետ միասին հայտատուն սերտիֆիկացման մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա) արտադրանքի տեխնիկական պայմանները.

բ) կոնստրուկտորական եւ տեխնոլոգիական փաստաթղթերը

(սերտիֆիկացման մարմնի հետ համաձայնեցված ծավալով)։

գ) ընդունման (որակավորման) փորձարկումների արձանագրությունը։

դ) որակավորման հանձնաժողովի ակտը, իսկ առաջնային սերտիֆիկացման դեպքում՝ նաեւ ընդունող հանձնաժողովի ակտը։

ե) ընդունող հանձնաժողովի կողմից հայտնաբերված թերությունների (առկայության դեպքում) վերացման միջոցառումների ծրագիրը եւ դրա իրականացումը հավաստող փաստաթղթերը։

զ) պարբերական եւ տիպային փորձարկումների անցկացման վերաբերյալ հաշվետվություններ։

է) արտադրանքի արտադրության վիճակի գնահատման հարցաթերթը։

ը) արտադրանքի թողարկման ծավալը։

թ) բողոքների վերաբերյալ տեղեկությունները։

ժ) ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի զետեղման եղանակի եւ տեղի մասին առաջարկությունը։

29. Սույն հոդվածի 26-րդ եւ 28-րդ կետերում նշված փաստաթղթերը ձեւակերպվում են՝ նշելով հայտատուի վավերապայմաններն ու նույնականացման համարը եւ վավերացվում են հայտատուի ստորագրությամբ։

Ապացուցողական փաստաթղթերի պատճենները դակվում եւ վավերացվում են հայտատուի ստորագրությամբ եւ կնիքով։ Եթե դրանք դակված չեն, ապա վավերացնում է փաստաթղթի յուրաքանչյուր թերթը։ Ապացուցողական բոլոր փաստաթղթերը ենթակա են սերտիֆիկացման մարմնի համապատասխան գործերում պահման՝ ՄՄ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան։

30. Արտադրանքի սերտիֆիկացման ժամանակ հաշվի են առնվում ընդունման եւ մյուս փորձարկումների արդյունքները՝ պայմանով, որ դրանք

անցկացվել են հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում (կենտրոններում)՝ սերտիֆիկացման մարմնի հետ համաձայնեցված ծրագրերով: Այդ դեպքում հայտատուն պետք է սերտիֆիկացում անցկացնելու մասին հայտը ներկայացնի մինչև փորձարկումներն անցկացնելը եւ սերտիֆիկացման մարմին ներկայացնի փորձարկումների անցկացման ժամանակացույցը: Փորձարկման լաբորատորիան (կենտրոնը) պետք է փորձարկումների մեկնարկի եւ դրանց անցկացման ընթացքի մասին տեղեկացնի սերտիֆիկացման մարմնին: Նշված փորձարկումները սերտիֆիկացման ժամանակ կարող են հաշվի առնվել միայն այն դեպքում, երբ դրանց արդյունքների համաձայն արտադրանքի կոնստրուկցիայի եւ դրա պատրաստման տեխնոլոգիայի մեջ չեն կատարվել այնպիսի էական փոփոխություններ, որոնք պահանջում են կրկնակի փորձարկումների անցկացում:

31. Սերտիֆիկացման մարմինը ուսումնասիրում է սերտիֆիկացում անցկացնելու մասին հայտը եւ այն ստանալուց հետո մեկ ամիսը չգերազանցող ժամկետում իր որոշման մասին հայտնում է հայտատուին:

32. Սերտիֆիկացում անցկացնելու մասին հայտի վերաբերյալ կայացված դրական որոշումը պետք է իր մեջ ներառի սերտիֆիկացման հիմնական պայմանները, այդ թվում տեղեկատվություն՝

ա) սերտիֆիկացման սխեմայի մասին.

բ) սերտիֆիկացում անցկացնելու ժամկետների մասին.

գ) նորմատիվային փաստաթղթերի մասին, որոնց հիման վրա կանցկացվի արտադրանքի սերտիֆիկացումը.

դ) կազմակերպության մասին, որը կանցկացնի արտադրանքի արտադրության վիճակի ստուգում, եթե դա նախատեսված է սերտիֆիկացման սխեմայով.

ե) արտադրանքի նմուշառման կարգի մասին.

զ) արտադրանքի նմուշների փորձարկումների անցկացման կարգի մասին.

է) արտադրանքի արտադրության պայմանների կայունության գնահատման կարգի մասին.

ը) արտադրանքի համապատասխանության գնահատման չափորոշիչների մասին.

թ) տեսչական ստուգում անցկացնելու պայմանների մասին:

33. Սերտիֆիկացման մարմնի կողմից սերտիֆիկացում անցկացնելը մերժելու մասին որոշում կայացնելու հիմքերն են՝

ա) սույն հոդվածի 25–րդ, 26–րդ եւ 28–րդ կետերում նշված փաստաթղթերը չներկայացնելը կամ ոչ ամբողջ ծավալով ներկայացնելը.

բ) ներկայացված փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների ոչ հավաստի լինելը:

34. Սերտիֆիկացում իրականացնելիս արտադրանքի նույնականացումը եւ արտադրանքի նմուշառումն իրականացնում է սերտիֆիկացման մարմինը: Փորձարկումներ կատարելու նպատակով արտադրանքի նմուշառումն անցկացվում է հետազոտությունների (փորձարկումների) եւ չափումների կանոններ եւ մեթոդներ, այդ թվում՝ ՄՄ սույն տեխնիկական կանոնակարգը կիրառելու ու կատարելու եւ ՄՄՀ–ի կողմից հաստատվող ցանկով սահմանված արտադրանքի համապատասխանության գնահատում (հավաստում) իրականացնելու համար անհրաժեշտ նմուշառման կանոններ պարունակող ստանդարտներով սահմանված պահանջներին համապատասխան:

Փորձարկումներ կատարելու նպատակով վերցված արտադրանքի նմուշները պետք է կառուցվածքով, կազմով եւ պատրաստման տեխնոլոգիայով լինեն այն արտադրանքի հետ նույնական, որոնք նախատեսված են սպառողին (պատվիրատուին) մատակարարելու համար:

35. Նմուշառման ակտը պետք է պարունակի՝

- ա) նմուշառման ակտի կազմման համարը եւ ամսաթիվը.
- բ) այն կազմակերպության անվանումը եւ հասցեն, որտեղ կատարվում է նմուշառումը.
- գ) արտադրանքի անվանումը.
- դ) չափումների մեծությունների միավորը.
- ե) խմբաքանակի չափը (ծավալը), որից կատարվել է ընտրությունը.
- զ) խմբաքանակի արտաքին տեսազննման արդյունքը (արտաքին տեսքը, փաթեթվածքի եւ մականշվածքի վիճակը, տեսողական հսկողությամբ որոշվող՝ սերտիֆիկացման ցուցանիշների գնահատման արդյունքները).
- է) խմբաքանակի պատրաստման ամսաթիվը.
- ը) այն նորմատիվ փաստաթղթի նշագիրը եւ անվանումը, որին համապատասխան կատարվել է նմուշառումը.
- թ) վերցված նմուշների թիվը եւ համարները.
- ժ) նմուշառման վայրը.
- ժա) արտադրանքի վերջնական ընդունման մասին պատրաստողի փաստաթղթերը.
- ժբ) սերտիֆիկացման մարմնի ներկայացուցիչների եւ հայտատուի վավերապայմանները եւ ստորագրությունները:

36. Համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա բաղկացուցիչ մասեր պարունակող արտադրանքի նմուշառման ակտին կցվում է առանձին բաղկացուցիչ մասերի համապատասխանության սերտիֆիկատների (համապատասխանության հայտարարագրերի) ցանկը, ինչպես նաեւ այն գծագրերի ցանկը, որոնցով դրանք պատրաստվում են:

Արտադրանքի վերցված նմուշները մականշում եւ ուղարկում են փորձարկման ուղեկցող նամակի եւ հանձնման ակտի հետ միասին: Անհրաժեշտության դեպքում

վերցված արտադրանքի մաս կազմող առանձին բաղկացուցիչ մասերը կարող են կապարակնքվել, ինչպես նաև մակնշվել:

37. Նույնականացման իրականացման ժամանակ արտադրանքի նմուշների՝ սերտիֆիկացում անցկացնելու մասին հայտում նշված հիմնական բնութագրերը համեմատում են մականշվածում եւ ուղեկցող փաստաթղթերում ներկայացված փաստացի բնութագրերի հետ, որոնք ներառում են՝

ա) անվանումը, տեսակը, մոդելը եւ մոդիֆիկացիան.

բ) պատրաստողի անվանումը կամ արտադրանքի ծագման մասին տվյալները.

գ) այն փաստաթուղթը, որով թողարկվում է արտադրանքը.

դ) նշանակության վերաբերյալ ցուցանիշները եւ այլ հիմնական ցուցանիշներ.

ե) համապատասխան խմբաքանակին պատկանելը.

զ) համապատասխան տեխնոլոգիական գործընթացին պատկանելը:

38. Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի համապատասխանությունը սահմանվում է հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում (կենտրոններում) անցկացված անհրաժեշտ տեսակների եւ կատեգորիաների փորձարկումների արդյունքների հիման վրա:

39. Արտադրանքի նմուշների սերտիֆիկացման նպատակներով չեն ուսումնասիրվում 5 տարուց ավելի վաղեմություն ունեցող փորձարկումների արդյունքները:

40. Այն արտադրանքը, որի մասին նշված է 3-րդ հավելվածում, կոնստրուկտորական փաստաթղթերում եւ որին տրված է «Օ» տառը, ենթակա չէ սերտիֆիկացման:

ԱՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին

համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը 3-րդ հավելվածում նշված մնացած արտադրանքի համար պարտադիր է:

41. Հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) բացակայության դեպքում թույլատրվում է սերտիֆիկացման նպատակով փորձարկումների անցկացումը զուտ տեխնիկական կոմպետենտության ապահովման մասով հավատարմագրված փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) կողմից: Այդ փորձարկումներն անցկացվում են սերտիֆիկացման մարմնի ներկայացուցիչների հսկողությամբ: Այդ փորձարկումների օբյեկտիվությունը զուտ տեխնիկական կոմպետենտության ապահովման առումով հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) հետ միասին ապահովում է այն սերտիֆիկացման մարմինը, որը դրանց անցկացումը հանձնարարել է տվյալ փորձարկման լաբորատորիային (կենտրոնին):

42. Փորձարկումների արձանագրությունը պետք է պարունակի՝

ա) փաստաթղթի անվանումը եւ նշագիրը, ընդ որում փաստաթղթի յուրաքանչյուր էջում նշագիրը կրկնվում է.

բ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) անվանումը եւ հասցեն, տեղեկություններ դրա հավատարմագրման մասին (հավատարմագրման վկայագրի համարը, տրամադրման ամսաթիվը եւ գործողության ժամկետը).

գ) փորձարկումների անցկացումը հանձնարարած սերտիֆիկացման մարմնի մասին տեղեկություններ.

դ) հայտատուի անվանումը եւ հասցեն.

ե) նշագիրը (նկարագրությունը, մականշվածքը), նույնականացման արդյունքները, պատրաստողի մասին տեղեկություններ եւ արտադրանքի պատրաստման ամսաթիվը.

զ) փորձարկումների անցկացման համար արտադրանքը ստանալու

ամսաթիվը.

է) ստուգման ենթակա ցուցանիշները եւ դրանց ներկայացվող պահանջները, ինչպես նաեւ տեղեկություններ այն նորմատիվ փաստաթղթերի մասին, որոնք պարունակում են այդ պահանջները.

ը) փորձարկումների անցկացման ամսաթիվը.

թ) փորձարկումների ժամանակ օգտագործված՝ փորձարկումների ստանդարտ եւ ոչ ստանդարտ մեթոդները եւ մեթոդակարգերը.

ժ) նախքան փորձարման անցկացումը արտադրանքը շրջակա միջավայրի պայմաններում պահելու, ինչպես նաեւ արտադրանքը փորձարկումների համար նախապատրաստելու մասին տեղեկություններ.

ժա) սեփական եւ վարձակալվող փորձարկման սարքավորումների եւ չափման միջոցների մասին տեղեկություններ.

ժբ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում (կենտրոններում) իրականացված հետազոտությունների (փորձարկումների) մասին տեղեկություններ.

ժգ) փորձարկումների անցկացման արդյունքները՝ անհրաժեշտության դեպքում՝ աղյուսակներով, ժամանակացույցերով, լուսանկարներով եւ այլ նյութերով հաստատված.

ժդ) հայտարարություն այն մասին, որ փորձարկումների արձանագրությունը վերաբերում է միայն փորձարկումների ենթարկված նմուշներին.

ժե) ապացուցողական նյութերը՝ ըստ ստացված արդյունքների, այդ թվում՝ գրանցված առաջնային տվյալները՝ աղյուսակների եւ (կամ) ժամանակացույցերի տեսքով.

ժզ) առաջնային տվյալների մշակում անցկացնելու ընթացակարգը՝ նշելով մշակման բոլոր չափանիշները եւ ստացված՝ միջանկյալ տվյալները.

ժէ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) ղեկավարի՝ կազմակերպության կնիքով վավերացված ստորագրությունը.

ժը) փորձարկումներն անցկացրած պատասխանատու կատարողների ստորագրությունները եւ պաշտոնները.

ժթ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) անունից փորձարկումների արձանագրության պատրաստման համար պատասխանատու անձի (անձանց) ստորագրությունը եւ պաշտոնը (անհրաժեշտության դեպքում).

ի) սերտիֆիկացման մարմնի ներկայացուցչի ստորագրությունը՝ ընդունման եւ սերտիֆիկացման փորձարկումների համատեղելիս, ինչպես նաեւ փորձարկումները, սույն հոդվածի 41-րդ կետի համաձայն, անցկացնելու դեպքում.

իա) փորձարկումների արձանագրության (հաշվետվության) թողարկման ամսաթիվը.

իբ) տեղեկություններ նրա մասին, որ փորձարկումների արձանագրության (հաշվետվության) մեջ փոփոխությունների կատարումը ձեւակերպվում է առանձին փաստաթղթով (հաշվետվության հավելված, նախորդ արձանագրությունը չեղարկող եւ փոխարինող նոր արձանագրություն).

իգ) փորձարկումների արձանագրության մասնակի վերատպման հնարավորությունը բացառող հայտարարություն:

43. Փորձարկումների արձանագրությանը պետք է կցվի նմուշառման ակտի հաստատված պատճենը եւ փորձարկումների համար արտադրանքը պատրաստ լինելու մասին ակտի պատճենը:

Փորձարկումների արձանագրությունը չպետք է ներառի փորձարկումների ստացված արդյունքներից բխող առաջարկություններ կամ առաջարկներ:

44. Սույն հոդվածի 42-րդ կետի պահանջներին համապատասխան ձեւակերպված փորձարկումների արձանագրությունների բնօրինակները

ներկայացնում են սերտիֆիկացման մարմին 2 օրինակից (առաջինն ուղարկվում է սերտիֆիկացման գործին կցելու համար, երկրորդը՝ հայտատուին): Փորձարկումների արձանագրությունների պատճենները հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) պահման ենթակա են համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետից ոչ պակաս ժամկետով, եթե համապատասխան նորմատիվ փաստաթղթերով եւ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) փաստաթղթերով այլ բան սահմանված չէ:

45. Արտադրանքի արտադրության վիճակի ստուգումն անցկացվում է սերտիֆիկացման ժամանակ ստուգվող կայուն բնութագրերով արտադրանքի պատրաստման համար անհրաժեշտ պայմանները սահմանելու նպատակով:

46. Արտադրանքի արտադրության վիճակի ստուգումն անցկացվում է

- ա) տեխնոլոգիական գործընթացների,
- բ) տեխնոլոգիական փաստաթղթերի,
- գ) տեխնոլոգիական զինման միջոցների,
- դ) տեխնոլոգիական ռեժիմների,
- ե) տեխնոլոգիական զինման միջոցների կառավարման,
- զ) չափագիտական սարքավորումների կառավարման,
- է) փորձարկումների եւ չափումների մեթոդակարգի,
- ը) հումքի եւ կոմպլեկտավորող տարրերի նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգի,
- թ) արտադրանքի նկատմամբ՝ դրա արտադրության գործընթացում հսկողություն իրականացնելու կարգի,
- ժ) չհամապատասխանող արտադրանքի կառավարման,
- ժա) բողոքագրերի հետ աշխատելու կարգի առնչությամբ:

47. Արտադրանքի արտադրության վիճակի ստուգման արդյունքներով կազմվում է սերտիֆիկացվող արտադրանքի արտադրության վիճակի ստուգման արդյունքների մասին ակտ, որում նշվում են՝

ա) ստուգման արդյունքները,

բ) արտադրանքի արտադրության վիճակի ստուգման ժամանակ օգտագործված լրացուցիչ նյութերը,

գ) արտադրանքի արտադրության վիճակի ընդհանուր գնահատականը,

դ) ուղղիչ միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը և ժամկետները:

48. Սերտիֆիկացվող արտադրանքի արտադրության վիճակի ստուգման արդյունքների մասին ակտը պահվում է սերտիֆիկացման մարմնում, իսկ դրա պատճենն ուղարկվում է հայտատուին:

49. Փորձարկումների արձանագրության (հաշվետվության) և արտադրանքի արտադրության վիճակի ստուգման արդյունքների (եթե դա սահմանված է սերտիֆիկացման սխեմայով և պայմանագրով) վերլուծությունից հետո սերտիֆիկացման մարմինը պատրաստում է որոշում համապատասխանության սերտիֆիկատ տրամադրելու (տրամադրելը մերժելու) մասին:

50. Սերտիֆիկացման մարմնի կողմից համապատասխանության սերտիֆիկատ տրամադրելը մերժելու մասին որոշում կայացնելու հիմքերն են՝

ա) արտադրանքի անհամապատասխանությունը ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին.

բ) արտադրանքի արտադրության վիճակի ստուգման (եթե դա սահմանված է սերտիֆիկացման սխեմայով) բացասական արդյունքը.

գ) ներկայացված փաստաթղթերում անարժանահավատ տեղեկություններին առկայությունը:

51. Համապատասխանության սերտիֆիկատ տրամադրելու մասին որոշման հիման վրա սերտիֆիկացման մարմինը ձեակերպում է համապատասխանության սերտիֆիկատը, սահմանված կարգով այն գրանցում է Միասնական ձեռով ձեակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության մասին հայտարարագրերի միասնական ռեեստրում եւ տրամադրում է հայտատուին: Սերտիֆիկատը վավերական է միայն գրանցման համարի առկայության դեպքում:

52. Համապատասխանության սերտիֆիկատներն ուժի մեջ են մտնում Միասնական ձեռով ձեակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության մասին հայտարարագրերի միասնական ռեեստրում գրանցվելու օրվանից:

Համապատասխանության սերտիֆիկատը կարող է ունենալ հավելված, որը ներառում է որոշակի տեսակի եւ տիպի արտադրատեսակների ցանկ, որոնց վրա տարածվում է դրա գործողությունը:

53. Այն արտադրանքի համար, որի կազմում ընդգրկված են համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա բաղկացուցիչ մասեր, համապատասխանության սերտիֆիկատ կարող է տրամադրվել միայն այդ բաղկացուցիչ մասերի համապատասխանության սերտիֆիկատների կամ համապատասխանության մասին հայտարարագրերի առկայության դեպքում: Համապատասխանության սերտիֆիկատի հավելվածում նշում է կատարվում այն մասին, որ ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով արտադրանքի մակնշումն իրականացվում է միայն համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա բաղկացուցիչ մասերի համապատասխանության սերտիֆիկատների կամ համապատասխանության մասին հայտարարագրերի առկայության դեպքում:

54. Առանձին բաղկացուցիչ մասերի համապատասխանության սերտիֆիկատ կամ համապատասխանության մասին հայտարարագիր չունեցող

արտադրանքի փորձնական նմուշները թույլատրվում է հսկողության ներքո շահագործման մեջ դնել մինչև առանձին բաղկացուցիչ մասերի համապատասխանության սերտիֆիկատ կամ համապատասխանության մասին հայտարարագիր ստանալը:

55. Արտադրանքի կոնստրուկցիայում (կազմում) կամ դրա արտադրության տեխնոլոգիայում այնպիսի փոփոխություններ կատարելու դեպքում, որոնք կարող են ազդել արտադրանքի՝ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության վրա, հայտատուն դրա մասին նախօրոք տեղեկացնում է սերտիֆիկացման մարմնին, որը որոշում է կայացնում նոր փորձարկումներ կամ այդ արտադրանքի արտադրության վիճակի ստուգում անցկացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

56. Սերտիֆիկացված արտադրանքին կցվող շահագործման փաստաթղթերը (շահագործման ձեռնարկ, տեղեկամատյան (ֆորմուլյար), անձնագիր, մանեկապիտակ, պիտակ), ինչպես նաև ապրանքն ուղեկցող փաստաթղթերը պետք է ներառեն ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը, անցկացված սերտիֆիկացման մասին նշում, ինչպես նաև համապատասխանության սերտիֆիկատի ձեւաթղթի հաշվառման համարը, դրա գրանցման համարը, տրամադրման ամսաթիվը եւ գործողության ժամկետը:

57. Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը համապատասխանության սերտիֆիկատի սեփականատիրոջ հայտով կարող է երկարաձգվել 1 տարին չգերազանցող ժամկետով՝ կրկնակի սերտիֆիկացման աշխատանքներն ավարտելու համար՝ արտադրանքի կոնստրուկցիայում եւ պատրաստման տեխնոլոգիայում փոփոխությունների, սպառողների կողմից բողոքագրերի եւ պահանջների բացակայության, ինչպես նաև վերջին տեսչական հսկողության դրական արդյունքների դեպքում:

58. Համապատասխանության սերտիֆիկատի սեփականատերն իրավունք

ունի տրամադրելու համապատասխանության սերտիֆիկատի՝ իր կողմից հաստատված պատճենները՝ ՄՄ մաքսային տարածքում դրանց օգտագործման նպատակով:

59. Տեսչական հսկողությունը, եթե դա նախատեսված է սերտիֆիկացման սխեմայով, իրականացնում է դրա սերտիֆիկացումն անցկացրած սերտիֆիկացման մարմինը: Տեսչական հսկողությունն իրականացվում է պարբերական եւ արտապլանային ստուգումներին ձեռով, որոնց միջոցով ապահովվում է փորձարկումների արդյունքների եւ արտադրանքի արտադրության վիճակի ստուգման միջոցով սերտիֆիկացված արտադրանքի մասին տեղեկությունների, համապատասխանության սերտիֆիկատի եւ ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի կիրառման պայմանների եւ կանոնների պահպանման մասին տեղեկությունների ստացումը՝ նպատակ ունենալով հաստատելու, որ արտադրանքը, համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամանակահատվածի ընթացքում շարունակում է համապատասխանել ՄՄ սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

60. Տեսչական հսկողության պարբերականությունը եւ ծավալը որոշելու չափորոշիչներն են՝

- ա) արտադրանքի պոտենցիալ վտանգավորության աստիճանը,
- բ) անցկացված՝ արտադրանքի սերտիֆիկացման արդյունքները,
- գ) արտադրանքի արտադրության կայունությունը,
- դ) արտադրանքի թողարկման ծավալը,
- ե) արտադրանքի արտադրության որակի կառավարման սերտիֆիկացված համակարգի առկայությունը,
- զ) տեսչական հսկողության իրականացման արժեքը:

61. Տեսչական հսկողության իրականացման ծավալը,

պարբերականությունը, բովանդակությունը եւ կարգը սահմանվում են սերտիֆիկացման մարմնի՝ համապատասխանության սերտիֆիկատ տրամադրելու մասին որոշման մեջ:

62. Արտահերթ տեսչական հսկողություն իրականացվում է արտադրանքի անվտանգության առնչությամբ ներկայացված պահանջների վերաբերյալ տեղեկատվության (հավաստող փաստաթղթերի) առկայության դեպքում: Նշված տեղեկությունները կարող են ստացվել սպառողներից, ինչպես նաեւ այն արտադրանքի անվտանգության նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնող մարմիններից, որի համար տրվել է համապատասխանության սերտիֆիկատը: Արտապլանային տեսչական հսկողության ժամանակ աշխատանքների ծավալը որոշվում է արտադրանքի անվտանգության ապահովման գործընթացում թերությունների հայտնաբերման հետ կապված տեխնոլոգիական գործընթացների ստուգման անհրաժեշտությամբ եւ իրականացվում է պատրաստողի կողմից՝ անհատույց հիմունքներով:

63. Տեսչական հսկողությունն իր մեջ ներառում է՝

- ա) արտադրանքի սերտիֆիկացման նյութերի վերլուծությունը.
- բ) սերտիֆիկացված արտադրանքի մասին ստացվող տեղեկությունների վերլուծությունը.
- գ) սերտիֆիկացված արտադրանքի փաստաթղթերի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության ստուգումը.
- դ) նմուշառումը եւ նմուշների նույնականացումը, նմուշների փորձարկումների անցկացումը եւ ստացված արդյունքների վերլուծությունը.
- ե) արտադրանքի կոնստրուկցիայում եւ պատրաստման տեխնոլոգիայում՝ սերտիֆիկացում անցկացնելու ժամանակ արձանագրված՝ արտադրանքի անվտանգության ցուցանիշների վրա ազդեցություն ունեցող փոփոխությունների կատարման բացակայության ստուգումը.

զ) արտադրանքի արտադրության վիճակի ստուգումը (եթե դա նախատեսված է սերտիֆիկացման սխեմայով)։

է) ավելի վաղ հայտնաբերված անհամապատասխանությունների վերացմանն ուղղված շտկող գործողությունների ստուգումը։

ը) ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով արտադրանքի մակնշման եւ ուղեկցող փաստաթղթերի ճշգրտության ստուգումը։

թ) սերտիֆիկացված արտադրանքի վերաբերյալ բողոքագրերի վերլուծությունը։

64. Տեսչական հսկողություն իրականացնելիս փորձարկումների բովանդակությունը, ծավալը եւ փորձարկումների անցկացման կարգը որոշում է տեսչական հսկողություն իրականացնող սերտիֆիկացման մարմինը։

65. Տեսչական ստուգման արդյունքները ձեւակերպվում են տեսչական հսկողություն իրականացնելու մասին ակտով։

Տեսչական հսկողություն իրականացնելու մասին ակտում, սույն հոդվածի 62-րդ կետի համաձայն կատարված աշխատանքների արդյունքների հիման վրա, կազմվում է եզրակացություն արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության, դրանց կատարման կայունության եւ տրված համապատասխանության սերտիֆիկատի պահպանման հնարավորության կամ համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու (չեղյալ ճանաչելու) մասին։

66. Տեսչական հսկողության արդյունքների հիման վրա կարող է կայացվել հետեւյալ որոշումներից որեւէ մեկը՝

ա) համապատասխանության սերտիֆիկատը շարունակում է գործել, եթե արտադրանքը համապատասխանում է ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին։

բ) համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցված է, եթե շտկող միջոցառումների միջոցով հայտատուն կարող է վերացնել արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին անհամապատասխանության հայտնաբերված պատճառները:

գ) համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը դադարեցված է, եթե շտկող միջոցառումների միջոցով հայտատուն չի կարող վերացնել արտադրանքի՝ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին անհամապատասխանության հայտնաբերված պատճառները:

67. Համապատասխանության սերտիֆիկատի գործողության դադարեցումն ուժի մեջ է մտնում Միասնական ձեռով ձեակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության մասին հայտարարագրերի միասնական ռեեստրում համապատասխան նշում կատարվելու օրվանից:

68. Համապատասխանության սերտիֆիկատի սեփականատիրոջ մեղքով նշանակված ժամկետներում տեսչական հսկողություն իրականացնելու անհնարինության պարագայում, սերտիֆիկացման մարմինը համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը կասեցնելու մասին որոշում է կայացնում հետեւյալ դեպքերում՝

ա) սերտիֆիկացման մարմնի հետ տեսչական հսկողության իրականացման վերաբերյալ պայմանագիր կնքելուց համապատասխանության սերտիֆիկատի սեփականատիրոջ հրաժարում.

բ) սերտիֆիկացման մարմնի հետ տեսչական հսկողության իրականացման վերաբերյալ պայմանագրով վճարում կատարելուց համապատասխանության սերտիֆիկատի սեփականատիրոջ հրաժարում.

գ) տեսչական հսկողության իրականացման ժամանակ սերտիֆիկացման մարմնի աշխատակիցների համար աշխատանքային պայմաններ (տարածքի, սույն հոդվածի 63-րդ հոդվածին համապատասխան անհրաժեշտ

տեղեկատվության տրամադրում) ստեղծելուց համապատասխանության սերտիֆիկատի սեփականատիրոջ հրաժարում:

69. Եթե համապատասխանության սերտիֆիկատի սեփականատերը կես տարին գերազանցող ժամկետում չի արտադրում սերտիֆիկացված արտադրանք, ապա արտադրանքի թողարկումը կարող է իրականացվել միայն արտահերթ տեսչական հսկողության իրականացումից հետո:

70. Համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման դեպքում՝

ա) սերտիֆիկացման մարմինը.

դրա մասին տեղեկացնում է ՄՄ անդամ պետությունների՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտում հսկողության եւ վերահսկողության գործառույթներ իրականացնող մարմիններին եւ շահագրգիռ կազմակերպություններին,

սահմանում է ուղղիչ միջոցառումների իրականացման ժամկետը եւ հսկում է համապատասխանության սերտիֆիկատի սեփականատիրոջ կողմից դրանց իրականացումը,

բ) համապատասխանության սերտիֆիկատի սեփականատերը՝

որոշում է սպառողի կողմից ուղարկված՝ սահմանված պահանջներից շեղումով արտադրանքի քանակը եւ տեղաբաշխումը,

սպառողներին եւ մյուս շահագրգիռ կազմակերպություններին ծանուցում է արտադրանքի օգտագործումը կասեցվելու վերաբերյալ եւ հաղորդում է հայտնաբերված թերությունների վերացման կարգը,

տեղում վերացնում է հայտնաբերված թերությունները կամ ապահովում է արտադրանքի վերադարձը՝ պատրաստողի կողմից լրացուցիչ մշակման համար:

71. Համապատասխանության սերտիֆիկատի գործողության կասեցման կամ դադարեցման, ինչպես նաեւ համապատասխանության սերտիֆիկատի գործողության վերականգնման վերաբերյալ տեղեկատվությունը

սերտիֆիկացման մարմինը հայտնում է ՄՄ անդամ պետությունների՝ երկաթուղային տրանսպորտի ոլորտում հսկողության եւ վերահսկողության գործառույթներ իրականացնող մարմիններին եւ շահագրգիռ կազմակերպություններին ի գիտություն:

72. Արտադրանքը, որի համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը դադարեցվել է, սերտիֆիկացման անցկացման համար կարող է կրկնակի հայտագրվել հայտատուի կողմից անհրաժեշտ ուղղիչ գործողությունների իրականացումից հետո: Կրկնակի սերտիֆիկացում անցկացնելու դեպքում սերտիֆիկացման մարմինը կարող է հաշվի առնել նախորդ սերտիֆիկացման դրական արդյունքները:

73. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի այն օբյեկտները, որոնց կառուցումն ավարտվել է, պետք է անցնեն շահագործման ընդունվելու ընթացակարգ:

74. Շահագործման ընդունելն իրականացվում է ամբողջությամբ կամ ըստ կառուցման փուլերի՝ նախագծային փաստաթղթերին համապատասխան եւ հաշվի առնելով դրանում՝ սահմանված կարգով կատարված փոփոխությունները:

75. Շահագործման ընդունելն իրականացվում է պատվիրատուի կողմից նշանակված՝ ընդունող հանձնաժողովի կողմից:

Ընդհանուր նշանակության այն երկաթուղային ուղիները, ինչպես նաեւ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի այն օբյեկտները շահագործման ընդունելը, որոնց կառուցումն իրականացվել է ՄՄ անդամ պետությունների բյուջեների միջոցների օգտագործմամբ, իրականացվում է ՄՄ անդամ պետության կողմից նշանակված՝ ընդունող հանձնաժողովի կողմից:

76. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի այն օբյեկտների պատրաստվածությունը ստուգելու համար, որոնց կառուցումն ավարտված է, պատվիրատուն՝ այն ընդունող հանձնաժողովին ներկայացնելու համար նշանակում է աշխատանքային հանձնաժողով (աշխատանքային

հանձնաժողովներ)՝ կառուցումն ավարտելու վերաբերյալ ենթակապալառուի կողմից պաշտոնական ծանուցումը ստանալուց հետո:

77. Շահագործման ընդունելու համար պատրաստ լինելու մասին աշխատանքային հանձնաժողովի որոշումը կայացվում է՝

ա) սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների համապատասխանության ստուգման արդյունքներով եւ հաստատված նախագծային փաստաթղթերով՝ հաշվի առնելով սահմանված կարգով դրանում կատարված փոփոխությունները.

բ) ենթակապալառուի կողմից մշակվող՝ գործադիր փաստաթղթերի վերլուծության արդյունքների հիման վրա.

գ) չափումների արդյունքների հիման վրա, այդ թվում՝ ավտոմատացված ուղեչափիչ ախտորոշիչ համակարգերի, կառուցվածքների, սարքվածքների, եւ մեխանիզմների փորձարկումների, ինչպես նաեւ սարքավորումների համալիր փորձարկման օգնությամբ:

78. Ստուգման արդյունքների հիման վրա՝ աշխատանքային հանձնաժողովը կազմում է եզրակացություն երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների՝ ընդունող հանձնաժողովի կողմից ընդունվելուն պատրաստ լինելու վերաբերյալ Նախագծային փաստաթղթերից շեղումներ հայտաբերելու դեպքում, դրանք պետք է վերացվեն՝ նախքան երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածի օբյեկտի՝ ընդունող հանձնաժողովի կողմից ընդունումը:

79. Ընդունող հանձնաժողովները պարտավոր են իրականացնել աշխատանքային հանձնաժողովների կողմից հայտնաբերված անհամապատասխանությունների վերացման եւ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտների՝ շահագործման ընդունելու համար պատրաստ լինելու ստուգում: Նշված ստուգումն անցկացվում է պատվիրատուի կողմից կազմված եւ ընդունող հանձնաժողովի կողմից հաստատված ծրագրին

համապատասխան: Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի այն օբյեկտների ընդունումը, որոնց կառուցումն ավարտված է, ընդունող հանձնաժողովի կողմից ձեակերպվում է ակտի միջոցով՝ աշխատանքային խմբի եզրակացության, ինչպես նաև ենթակապալառուի կողմից ներկայացվող փաստաթղթերի հիման վրա:

Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտները շահագործման ընդունելու մասին ակտը պետք է ստորագրվի ընդունող հանձնաժողովի բոլոր անդամների կողմից, որոնցից յուրաքանչյուրը, իր իրավասության շրջանակներում, պատասխանատվություն է կրում հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների համար: Այն դեպքում, երբ ընդունող հանձնաժողովի առանձին անդամներ հրաժարվում են ստորագրել ակտը, նրանք հանձնաժողովի նախագահին պետք է ներկայացնեն այն համապատասխան մարմինների եզրակացությունները, որոնց ներկայացուցիչներն են իրենք՝ իրենց իրավասության շրջանակներում ընդգրկված հարցերի վերաբերյալ դիտողությունների շարադրմամբ:

Նշված դիտողությունները պետք է հանվեն՝ եզրակացությունը տված մարմինների մասնակցությամբ:

Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի այն օբյեկտները, որոնց մասով նշված դիտողությունները հանված չեն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար սահմանված ժամկետում, պետք է ընդունող հանձնաժողովի կողմից ճանաչվեն շահագործման ընդունելու համար չնախապատրաստված:

80. Արգելվում է երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտները շահագործման մեջ դնելը՝ առանց ավարտելու նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շրջակա միջավայրի պաշտպանության, բնական միջավայրի վերականգնման, հողերի վերակուլտիվացման և տարածքների բարեկարգման աշխատանքները՝ ՄՄ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

81. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտները շահագործման մեջ դնելու թույլտվություն ստանալու համար պատվիրատուն՝ համապատասխան հայտով դիմում է ՄՄ անդամ պետության այն մարմին, որի իրավասության մեջ, ազգային օրենսդրությանը համապատասխան, մտնում է երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օբյեկտները շահագործման մեջ դնելու թույլտվությունների տրամադրումը: Հայտին կից ներկայացվում են ՄՄ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերը:

Հոդված 7. ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը

1. Անվտանգությանը ներկայացվող պահանջներին համապատասխանող եւ ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածի համաձայն համապատասխանության հավաստման ընթացակարգ անցած արտադրանքը պետք է ունենա մականշվածք՝ ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով:

2. ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը կատարվում է մինչեւ շուկայում այն շրջանառության մեջ դնելը:

3. ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է արտադրանքի յուրաքանչյուր միավորի վրա:

ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է անմիջապես արտադրատեսակի վրա, ինչպես նաեւ դրվում է դրան կից ներկայացվող շահագործման փաստաթղթերի վրա:

ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է արտադրանքի շահագործման ամբողջ ընթացքում պարզ եւ հստակ պատկերում ապահովող ցանկացած եղանակով:

4. Թույլատրվում է ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի զետեղումը միայն փաթեթվածքի վրա եւ դրան կից ներկայացվող շահագործման փաստաթղթերում նշելը, եթե այն անհնար է զետեղել անմիջապես արտադրանքի վրա՝ հաշվի առնելով դրա կառուցվածքի առանձնահատկությունները:

5. Արտադրանքի մակնշումը ՄՄ անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով վկայում է դրա՝ ՄՄ այն բոլոր տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության մասին, որոնք տարածվում են այդ արտադրանքի վրա եւ որոնցով նախատեսվում են ՄՄ շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի զետեղում:

Հոդված 8. Պաշտպանության մասով վերապահումը

1. ՄՄ անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները՝ արտադրանքը ՄՄ մաքսային տարածքում շրջանառության մեջ դնելը սահմանափակելու, արգելելու, ինչպես նաեւ մարդու կյանքի ու առողջության, գույքի համար վտանգ ներկայացնող արտադրանքը շուկայից հանելու համար:

2. Մաքսային միության անդամ պետության իրավասու մարմինը պարտավոր է Հանձնաժողովին եւ Մաքսային միության մյուս անդամ պետությունների իրավասու մարմիններին ծանուցել ընդունված որոշման մասին՝ նշելով տվյալ որոշումն ընդունելու պատճառները եւ տրամադրելով ապացույցներ, որոնցով պարզաբանվում է տվյալ միջոցը ձեռնարկելու անհրաժեշտությունը:

3. Պաշտպանության մասով հոդվածի կիրառման համար հիմք կարող են ծառայել հետևյալ դեպքերը՝

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի 4-րդ հոդվածի դրույթները չկատարելը.

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի հետ փոխկապակցված՝ ՄՄ սույն

Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հոդվածում նշված ստանդարտների ոճ ճիշտ կիրառումը, եթե այդ ստանդարտները կիրառվել են,

ՄՄ սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածում շարադրված կանոնները չկատարելը.

համապատասխանության պարտադիր հավաստման իրականացումը համապատասխանության գնահատման այն մարմինների կողմից, որոնք ընդգրկված չեն ՄՄ սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում կամ չեն համապատասխանում սահմանված չափորոշիչներին.

արտադրանքը շուկայում շրջանառության մեջ դնելն արգելելու այլ պատճառներ:

4. Եթե ՄՄ այլ անդամ պետությունների իրավասու մարմինները բողոք են ներկայացնում սույն հոդվածի 1-ին կետում նշված որոշման դեմ, ապա ՄՄՀ-ն անհապաղ խորհրդակցություններ է անցկացնում ՄՄ բոլոր անդամ պետությունների իրավասու մարմինների հետ՝ փոխընդունելի որոշում ընդունելու նպատակով:

Հավելված թիվ 1

«Երկաթուղային տրանսպորտի
ենթակառուցվածքի անվտանգության
մասին» ՄՄ տեխնիկական կանոնակարգի

ՑԱՆԿ

**ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ ԵՎ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍԵՐԻ ՏԱՐԵՐԻ**

**I. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի
ենթահամակարգերի բաղկացուցիչ մասերը**

1. Ուղու վերին կառույց
2. Ջրահեռացման, հակադեֆորմացիոն, պաշտպանիչ եւ ամրացման կառուցվածքներ
3. Բեռնաբակեր, կոնտեյներների հարթակներ
4. Երկաթուղային ուղի
5. Երկաթուղային գծանց
6. Երկաթուղային կայարաններ
7. Հողային պաստառ
8. Հպումային ցանց
9. Կամուրջներ երկաթուղային
10. Ուղեւորների համար նախատեսված կառամատույցներ եւ բեռնային հարթակներ
11. Երկաթուղային ուղիներով անցնող հետիոտնային անցումներ
12. Հետիոտնային կամուրջներ երկաթուղային ուղիների վրա
13. Հետիոտնային թունելներ երկաթուղային ուղիների տակ
14. Լվացման-ջոզեհարման կայարաններ
15. Վազոնների լվացման եւ ախտահանման կետեր
16. Ջննման կետեր
17. Վազոնների՝ բեռնման համար նախապատրաստման կետեր
18. Գնացքների երթելեկության անվտանգության ապահովման կետեր եւ պահակակետեր
19. Անջատման ընթացիկ վերանորոգման կետեր
20. Տեխնիկական սպասարկման կետեր

21. Ազդանշանային, կենտրոնացման եւ բլոկավորման համակարգեր, սարքավորանքներ ու սարքավորումներ կայարանամեջերում եւ կայարաններում
22. Երկաթուղային էլեկտրակապի համակարգեր, սարքավորանքներ եւ սարքավորումներ
23. Էլեկտրամատակարարման սարքվածքների համակարգեր, սարքավորանքներ ու սարքավորումներ կայարանամեջերում եւ կայարաններում
24. Վազոնների տեսակավորման թեքուղիներ
25. Երկաթուղային թունելներ
26. Տրանսֆորմատորային ենթակայաններ
27. Խողովակներ ջրթող
28. Քարշային ենթակայան (սեկցիավորման կետ)
29. Հատված՝ երկաթուղային ուղու
30. Հանդերձավորման կառուցվածքներ եւ սարքվածքներ

**II. Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի
ենթահամակարգերի բաղկացուցիչ մասերի տարրերը**

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
1.	Երկաթուղային տրանսպորտում կիրառվող՝ ավտոմատացված չափիչ եւ հսկիչ-փորձարկման ստենդեր եւ համակարգեր	85
2.	Ավտոմատացված աշխատատեղեր՝ երկաթուղային տրանսպորտի՝ երթելեկության եւ տեղեկատվական անվտանգության ապահովման ստորաբաժանումների աշխատողների	85
3.	Երթելեկության եւ տեղեկատվական անվտանգության ապահովման հետ կապված՝ տեխնոլոգիական գործընթացների օպերատիվ կառավարման ավտոմատացված համակարգեր	85
4.	Ապարատուրա՝ հեռուստամեխանիկայի, էլեկտրամատակարարման սարքվածքների	85
5.	Հեղույսներ՝ ռելսային կցվանքների համար	7302 7318
6.	Հեղույսներ՝ միջադիր, երկաթուղային ուղու ռելսային ամրակումների համար	7302 7318
7.	Հեղույսներ՝ սեղմակային, երկաթուղային ուղու ռելսային ամրակումների համար	7302 7318
8.	Չորսուներ՝ փայտե, լայն ռելսամեջով սլաքային փոխադրիչների համար, նախքան դրանց մեխանիկական եւ պաշտպանական մշակումը	4407
9.	Չորսուներ՝ փայտե, լայն ռելսամեջով սլաքային փոխադրիչների համար, պաշտպանական միջոցներով տոգորված	4407

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
10.	Չորսուններ՝ երկաթբետոնե, 1520մմ ռելսամեջով երկաթուղիների սլաքային փոխադրիչների համար	6810
11.	Չորսուններ՝ կամրջային, փայտե, լայն ռելսամեջով երկաթուղիների, նախքան դրանց մեխանիկական եւ պաշտպանական մշակումը	4406 4407
12.	Չորսուններ՝ կամրջային, փայտե, լայն ռելսամեջով երկաթուղիների, պաշտպանական միջոցներով տոգորված	4406 4407
13.	Փականային պարպիչներ եւ լարման սահմանափակիչներ՝ երկաթուղիների էլեկտրամատակարարման սարքվածքների համար	8535
14.	Մանեկներ՝ ռելսային կցվանքների հեղույսների համար	7318
15.	Մանեկներ՝ երկաթուղային ուղու ռելսային ամրակումների միջադիր հեղույսների համար	7318
16.	Մանեկներ՝ երկաթուղային ուղու ռելսային ամրակումների սեղմակային հեղույսների համար	7318
17.	Լուսացույցի գլխիկ՝ լուսադիոդային, երկաթուղային գծանցների համար	8530
18.	Տվիչ՝ ինդուկտիվ լարային	85 90
19.	Վերծանիչներ՝ թվային, կոդային ավտոմատ բլոկավորման	85
20.	Դիոդային հողակցիչներ՝ էլեկտրաֆիկացված երկաթուղիների հպումային ցանցի սարքվածքների	85
21.	Երկաթբետոնե հենակներ՝ էլեկտրաֆիկացված երկաթուղիների հպումային ցանցի հենարանների համար	6810
22.	Սարքվածքներ՝ փակիչ կապարականքող	82 84
23.	Մեկուսիչներ՝ էլեկտրաֆիկացված երկաթուղիների հպումային ցանցի համար	8546
24.	Սեղմակներ՝ զսպանակավոր, ձողավոր, ռեսլերի ամրակման համար	7302
25.	Սեղմակներ՝ զսպանակավոր, ՋԵՐ-65 տիպի, ոչ առանձին ամրակման	7302
26.	Սեղմակներ՝ առանձին եւ ոչ առանձին ամրակման	7302
27.	Ուղեփոխիչներ՝ սլաքային փոխանցիչների	73
28.	Լուսազտիչների–ոսպնյակների եւ ոսպնյակների լրակազմեր, ոսպնյակավորների լրակազմեր լամպակալով՝ երկաթուղային տրանսպորտի ոսպնյակավոր լուսացույցների համար	7014 00 000 0 8530 9002
29.	Կեռաբեռներ՝ ճանապարհային	7317 00
30.	Մետաղական հենակներ՝ էլեկտրաֆիկացված երկաթուղիների հպումային ցանցի հենարանների համար	7308
31.	Մակադրակներ՝ երկաթուղային ռելսերի մեկուսացնող	73

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
	կցվանքների համար	
32.	Մակադրակներ՝ ռելսային, երկգլխանի, լայն ռելսամեջով երկաթուղիների համար	7302
33.	Լեզվակներ՝ սլաքային փոխանցիչների, տարբեր տիպերի եւ ապրանքանիշերի	73
34.	Տակդիրներ՝ երկաթուղային ուղիների առանձին ամրակման	7302
35.	Տակդիրներ՝ երկաթուղային ուղու կեռաբեւեռային ամրակման	7302
36.	Ծրագրային ապահովում՝ իրավիճակային կառավարման կենտրոնների	85
37.	Ծրագրային միջոցներ՝ գնացքների երթեւեկության օպերատիվ կառավարման ավտոմատացված համակարգերի համար	85
38.	Երկաթուղային տրանսպորտի ծրագրային միջոցներ՝ երթեւեկության եւ տեղեկատվական անվտանգության ապահովման հետ կապված՝ տեխնոլոգիական գործընթացների օպերատիվ կառավարման ավտոմատացված համակարգերի համար	85
39.	Հակախաղացքներ՝ զսպանակավոր, երկաթուղային ռելսերի	7302 90
40.	Հպալարեր՝ պղնձից եւ դրա համաձուլվածքներից, երկաթուղային հպումային ցանցի համար	8544
41.	Միջադիրներ՝ ռելսային ամրակման	7302
42.	Զատիչներ՝ էլեկտրաֆիկացված երկաթուղիների էլեկտրամատակարարման համակարգերի քարշային ենթակայանների համար	85
43.	Ռեակտորներ՝ էլեկտրաֆիկացված երկաթուղիների էլեկտրամատակարարման համակարգերի քարշային ենթակայանների համար	85
44.	Զատիչներ՝ երկաթուղային հպումային ցանցի	85
45.	Ռելեններ՝ էլեկտրամագնիսական, չկարգավորվող, հուսալիության առաջին դասի, ռելեային բլոկեր	8535 8538
46.	Ռելսեր՝ երկաթուղային, լայն ռելսամեջի	7302
47.	Ռելսեր՝ երկաթուղային, լեզվակավոր	7302
48.	Ռելսեր՝ երկաթուղային, զուգառելսային	7302
49.	Ռելսային ամրակում	7302
50.	Պարզունակներ՝ կոշտ լայնադրակների, էլեկտրաֆիկացված երկաթուղիների հպումային ցանցի կախոցի սարքվածքների	73
51.	Լուսազտիչներ, ոսպնյակներ, լուսազտիչներ– ոսպնյակներ, լուսացիրներ եւ խոտորվող ներդիրներ՝ ապակե, երկաթուղային տրանսպորտի ազդանշանային սարքերի	7014 00 000 0 8530 90 9002 9405 91
52.	Ստատիկ կերպափոխիչներ՝ էլեկտրաֆիկացված երկաթուղիների	8504 40

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
	Էլեկտրամատակարարման սարքվածքների համար	
53.	Սլաքային փոխադրիչներ, ռեմ-կոմպլեկտներ (կիսասլաքներ), խուլ Երկաթուղային ուղիների փոխհատումներ	7302 8608 00 100 0
54.	Սլաքային, էլեկտրամեխանիկական շարժաբեռներ	8501 8608 00
55.	Կցվանքներ՝ մեկուսացնող, երկաթուղային ռելսերի	7302
56.	Առաձգական, զսպանակավոր տարրեր՝ ճանապարհային (երկգալարային տափօղակներ, ափսեածեւ զսպանակներ, սեղմակներ)	7302 7318 21 000 0 7320
57.	Սարքվածքներ՝ քարշային ենթակայանների պաշտպանության, էլեկտրաֆիկացված երկաթուղիների կցվանքային կայարանների	85
58.	Հիմքեր՝ երկաթբետոնե, էլեկտրաֆիկացված երկաթուղիների հպումային ցանցի հենարանների համար	68
59.	Փայտակոճեր՝ լայն ռելսամեջով երկաթուղիների համար, նախքան դրանց մեխանիկական եւ պաշտպանական մշակումը	4406 4407
60.	Փայտակոճեր՝ լայն ռելսամեջով երկաթուղիների համար, պաշտպանական միջոցներով տոգորված	4406 4407
61.	Կոճեր՝ երկաթբետոնե, 1520 մմ ռելսամեջով երկաթուղիների	6810
62.	Պտուտակներ՝ ճանապարհային	7318
63.	Խիճ՝ բնական քարից, երկաթուղային ուղու բալաստային շերտի համար	2517
64.	Տարրեր՝ ամրակումների, երկաթուղային սլաքային փոխանցիչների, գարնիտուրներ, արտաքին միակցիչներ	73

Հավելված թիվ 2

«Երկաթուղային տրանսպորտի
 ենթակառուցվածքի
 անվտանգության մասին» ՄՄ
 տեխնիկական կանոնակարգի

ՑԱՆԿ

**ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ՝ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ
 ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ**

1. Ուղու վերին կառույց
2. Ջրահեռացման, հակադեֆորմացիոն, պաշտպանիչ եւ ամրացման կառուցվածքներ
3. Բեռնաբակեր, կոնտեյներների հարթակներ
4. Երկաթուղային ուղի
5. Երկաթուղային գծանց
6. Երկաթուղային կայարաններ
7. Հողային պաստառ
8. Հպումային ցանց
9. Կամուրջներ երկաթուղային
10. Ուղեւորների համար նախատեսված կառամատուցներ եւ բեռնային հարթակներ
11. Երկաթուղային ուղիներով անցնող հետիոտնային անցումներ
12. Հետիոտնային կամուրջներ երկաթուղային ուղիների վրա
13. Հետիոտնային թունելներ երկաթուղային ուղիների տակ
14. Լվացման-շոգեհարման կայարաններ
15. Վազոնների լվացման եւ ախտահանման կետեր
16. Ձննման կետեր
17. Վազոնների՝ բեռնման համար նախապատրաստման կետեր
18. Գնացքների երթելեկության անվտանգության ապահովման կետեր եւ պահակակետեր
19. Անջատման ընթացիկ վերանորոգման կետեր
20. Տեխնիկական սպասարկման կետեր
21. Ազդանշանային, կենտրոնացման եւ բլոկավորման համակարգեր, սարքավորանքներ ու սարքավորումներ կայարանամեջերում եւ կայարաններում
22. Երկաթուղային էլեկտրակապի համակարգեր, սարքավորանքներ եւ սարքավորումներ
23. Էլեկտրամատակարարման սարքվածքների համակարգեր, սարքավորանքներ ու

սարքավորումներ կայարանամեջերում եւ կայարաններում

24. Վագոնների տեսակավորման թեքուղիներ
25. Երկաթուղային թունելներ
26. Տրանսֆորմատորային ենթակայաններ
27. Խողովակներ ջրթող
28. Քարշային ենթակայան (սեկցիավորման կետ)
29. Հատված երկաթուղային ուղու
30. Հանդերձավորման կառուցվածքներ եւ սարքվածքներ

Հավելված թիվ 3

«Երկաթուղային տրանսպորտի
ենթակառուցվածքի
անվտանգության մասին» ՄՄ
տեխնիկական կանոնակարգի

ՑԱՆԿ**ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ**

	Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
1. Ապարատուրա՝ հեռուստամեխանիկայի, էլեկտրամատակարարման սարքվածքների	85
2. Հեղույսներ՝ սեղմակային, երկաթուղային ուղու ռելսային ամրակումների համար	7302 7318
3. Չորսուններ՝ երկաթբետոնե, 1520մմ ռելսամեջով երկաթուղիների սլաքային փոխադրիչների համար	6810
4. Փականային պարպիչներ եւ լարման սահմանափակիչներ՝ երկաթուղիների էլեկտրամատակարարման սարքվածքների համար	8535
5. Լուսացույցի գլխիկ՝ լուսադիոդային, երկաթուղային գծանցների համար	8530
6. Տվիչ՝ ինդուկտիվ լարային	85 90
7. Վերծանիչներ՝ թվային, կողային ավտոմատ բլոկավորման	85
8. Երկաթբետոնե հենակներ՝ էլեկտրաֆիկացված երկաթուղիների հպումային ցանցի հենարանների համար	6810
9. Մեկուսիչներ՝ էլեկտրաֆիկացված երկաթուղիների հպումային ցանցի համար	8546
10. Սեղմակներ՝ զսպանակավոր, ձողավոր, ռեսլերի ամրակման համար	7302
11. Սեղմակներ՝ զսպանակավոր, ՋԵՐ-65 տիպի, ոչ առանձին ամրակման	7302
12. Սեղմակներ՝ առանձին եւ ոչ առանձին ամրակման	7302
13. Ուղեփոխիչներ՝ սլաքային փոխանցիչների	73
14. Լուսազտիչների-ոսպնյակների եւ ոսպնյակների լրակազմեր,	7014 00,000 0

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
	նսանյակավորների լրակազմեր լամպակալով՝ երկաթուղային	8530
	տրանսպորտի նսանյակավոր լուսացույցների համար	9002
15.	Մետաղական հենակներ՝ էլեկտրաֆիկացված երկաթուղիների հպումային ցանցի հենարանների համար	7308
16.	Մակադրակներ՝ երկաթուղային ռելսերի մեկուսացնող կցվանքների համար	73
17.	Մակադրակներ՝ ռելսային, երկգլխանի, լայն ռելսամեջով երկաթուղիների համար	7302
18.	Լեզվակներ՝ սլաքային փոխանցիչների, տարբեր տիպերի եւ ապրանքանիշերի	73
19.	Տակդիրներ՝ երկաթուղային ուղիների առանձին ամրակման	7302
20.	Հպալարեր՝ պղնձից եւ դրա համաձուլվածքներից, երկաթուղային հպումային ցանցի համար	8544
21.	Ռեւեններ՝ էլեկտրամագնիսական, չկարգավորվող, հուսալիության առաջին դասի, ռելեային բլոկեր	8535 8538
22.	Ռելսեր՝ երկաթուղային, լայն ռելսամեջի	7302
23.	Ռելսեր՝ երկաթուղային, լեզվակավոր	7302
24.	Ռելսեր՝ երկաթուղային, զուգառելսային	7302
25.	Ռելսային ամրակում	7302
26.	Պարզունակներ՝ կոշտ լայնադրակների, էլեկտրաֆիկացված երկաթուղիների հպումային ցանցի կախոցի սարքվածքների	73
27.	Լուսազտիչներ, նսանյակներ, լուսազտիչներ– նսանյակներ, լուսացիրներ եւ խոտորվող ներդիրներ՝ ապակե, երկաթուղային տրանսպորտի ազդանշանային սարքերի	7014 00,000 0 8530 90 9002 9405 91
28.	Սլաքային փոխադրիչներ, ռեմ–կոմպլեկտներ (կիսասլաքներ), երկաթուղային ուղիների խուլ փոխհատումների	7302 8608 00,100 0
29.	Սլաքային, էլեկտրամեխանիկական շարժաբերներ	8501 8608 00
30.	Առածգական, զսպանակավոր տարրեր՝ ճանապարհային (երկգալարային տափօղակներ, ափսեածեւ զսպանակներ, սեղմակներ)	7302 7318 21 000 0 7320
31.	Սարքվածքներ՝ քարշային ենթակայանների պաշտպանության, էլեկտրաֆիկացված երկաթուղիների կցվանքային կայարանների	85
32.	Հիմքեր՝ երկաթբետոնե, էլեկտրաֆիկացված երկաթուղիների հպումային ցանցի հենարանների համար	68
33.	Կոճեր՝ երկաթբետոնե, 1520 մմ ռելսամեջով երկաթուղիների	6810
34.	Տարրեր՝ ամրակումների, երկաթուղային սլաքային փոխանցիչների, գարնիտուրներ, արտաքին միակցիչներ	73

Հավելված թիվ 4

«Երկաթուղային տրանսպորտի
ենթակառուցվածքի
անվտանգության մասին» ՄՄ
տեխնիկական կանոնակարգի

ՑԱՆԿ**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ**

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
1.	Երկաթուղային տրանսպորտում կիրառվող՝ ավտոմատացված չափիչ եւ հսկիչ-փորձարկման ստենդեր եւ համակարգեր	85
2.	Ավտոմատացված աշխատատեղեր՝ երկաթուղային տրանսպորտի՝ երթեւեկության եւ տեղեկատվական անվտանգության ապահովման ստորաբաժանումների աշխատողների	85
3.	Երթեւեկության եւ տեղեկատվական անվտանգության ապահովման հետ կապված՝ տեխնոլոգիական գործընթացների օպերատիվ կառավարման ավտոմատացված համակարգեր	85
4.	Հեղույսներ՝ ռելսային կցվանքների համար	7302 7318
5.	Հեղույսներ՝ միջադիր, երկաթուղային ուղու ռելսային ամրակումների համար	7302 7318
6.	Չորսուներ՝ փայտե, լայն ռելսամեջով սլաքային փոխադրիչների համար, նախքան դրանց մեխանիկական եւ պաշտպանական մշակումը	4407
7.	Չորսուներ՝ փայտե, լայն ռելսամեջով սլաքային փոխադրիչների համար, պաշտպանական միջոցներով տոգորված	4407
8.	Չորսուներ՝ կամրջային, փայտե, լայն ռելսամեջով երկաթուղիների, նախքան դրանց մեխանիկական եւ պաշտպանական մշակումը	4406 4407
9.	Չորսուներ՝ կամրջային, փայտե, լայն ռելսամեջով երկաթուղիների, պաշտպանական միջոցներով տոգորված	4406 4407

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
10.	Մանեկներ՝ ռելսային կցվանքների հեղույսների համար	7318
11.	Մանեկներ՝ երկաթուղային ուղու ռելսային ամրակումների միջադիր հեղույսների համար	7318
12.	Մանեկներ՝ երկաթուղային ուղու ռելսային ամրակումների սեղմակային հեղույսների համար	7318
13.	Դիողային հողակցիչներ՝ էլեկտրաֆիկացված երկաթուղիների հպումային ցանցի սարքվածքների	85
14.	Սարքվածքներ՝ փակիչ կապարականքող	82 84
15.	Կեռաբեւեռներ՝ ճանապարհային	731700
16.	Տակդիրներ՝ երկաթուղային ուղու կեռաբեւեռային ամրակման	7302
17.	Ծրագրային ապահովում՝ իրավիճակային կառավարման կենտրոնների	85
18.	Ծրագրային միջոցներ՝ գնացքների երթեւեկության օպերատիվ կառավարման ավտոմատացված համակարգերի համար	85
19.	Երկաթուղային տրանսպորտի ծրագրային միջոցներ՝ երթեւեկության եւ տեղեկատվական անվտանգության ապահովման հետ կապված՝ տեխնոլոգիական գործընթացների օպերատիվ կառավարման ավտոմատացված համակարգերի համար	85
20.	Հակախաղացքներ՝ զսպանակավոր, երկաթուղային ռելսերի	7302 90
21.	Միջադիրներ՝ ռելսային ամրակման	7302
22.	Զատիչներ՝ էլեկտրաֆիկացված երկաթուղիների էլեկտրամատակարարման համակարգերի քարշային ենթակայանների համար	85
23.	Զատիչներ՝ երկաթուղային հպումային ցանցի	85
24.	Կցվանքներ՝ մեկուսացնող, երկաթուղային ռելսերի	7302
25.	Ռեակտորներ՝ էլեկտրաֆիկացված երկաթուղիների էլեկտրամատակարարման համակարգերի քարշային ենթակայանների համար	85
26.	Ստատիկ կերպափոխիչներ՝ էլեկտրաֆիկացված երկաթուղիների էլեկտրամատակարարման սարքվածքների համար	8504 40
27.	Փայտակոճեր՝ լայն ռելսամեջով երկաթուղիների համար, նախքան դրանց մեխանիկական եւ պաշտպանական մշակումը	4406 4407
28.	Փայտակոճեր՝ լայն ռելսամեջով երկաթուղիների համար, պաշտպանական միջոցներով տոգորված	4406 4407
29.	Պտուտակներ՝ ճանապարհային	7318

		Դիրքի ծածկագիրը՝ ըստ ՄՄ ԱՏԳ ԱԱ-ի
30	Խիճ՝ բնական քարից, երկաթուղային ուղու բալաստային շերտի համար	2517

Հավելված թիվ 5

«Երկաթուղային տրանսպորտի
ենթակառուցվածքի
անվտանգության մասին» ՄՄ
տեխնիկական կանոնակարգի

ՑԱՆԿ**ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՍԽԵՄԱՆԵՐԻ**

Սխեմայի նշագիր	Սխեմայի բովանդակություն	Կատարողներ	Կիրառության ոլորտ
1ս	արտադրանքի նմուշի հետազոտությունների, փորձարկումների եւ չափումների (այսուհետ՝ փորձարկումներ) անցկացում սահմանափակ ժամանակում պատրաստվող արտադրանքի նախապես որոշված խմբաքանակի համար հայտատուին համապատասխանության սերտիֆիկատի տրամադրում փորձարկումների դրական արդյունքի դեպքում	հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (կենտրոն) սերտիֆիկացման մարմին	կիրառելի են այն արտադրանքի սահմանափակ, նախապես պայմանավորված ծավալով իրացման դեպքում, որը կարճ ժամանակահատվածում պետք է մատակարարվի (իրացվի) առանձին խմբաքանակներով՝ դրանց սերիական արտադրությանը զուգընթաց (Մաքսային միության միասնական մաքսային տարածք ներմուծվող արտադրանքի համար՝ կարճաժամկետ պայմանագրերի դեպքում, Մաքսային միության միասնական մաքսային տարածքում արտադրվող արտադրանքի համար՝ սահմանափակ ծավալով թողարկման դեպքում): Համապատասխանության

Սխեմայի նշագիր	Սխեմայի բովանդակություն	Կատարողներ	Կիրառության ոլորտ
2ս	<p>արտադրանքի տիպային նմուշի փորձարկումների անցկացում</p> <p>արտադրության վիճակի ստուգման անցկացում</p>	<p>հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (կենտրոն)</p> <p>սերտիֆիկացման մարմին</p>	<p>սերտիֆիկատի գործողության ժամկետը 1 տարի է:</p> <p>կիրառելի են սերիական թողարկման արտադրանքի համար՝ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) արտադրանքի տիպային նմուշի արտադրության վիճակի ստուգման եւ փորձարկումների հիման վրա:</p> <p>Համապատասխանության սերտիֆիկատը տրամադրվում է 1 տարի ժամկետով</p>
3ս	<p>արտադրանքի տիպային նմուշի փորձարկումների անցկացում</p> <p>սերիական թողարկման արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատի տրամադրում հայտատուին փորձարկումների դրական արդյունքների դեպքում</p> <p>հավատարմագրված փորձարկման</p>	<p>հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (կենտրոն)</p> <p>սերտիֆիկացման մարմին</p> <p>սերտիֆիկացման մարմին</p>	<p>կիրառելի են սերիական թողարկման արտադրանքի համար Համապատասխանության սերտիֆիկատը տրամադրվում է երեք տարին չգերազանցող ժամկետով</p>

Սխեմայի նշագիր	Սխեմայի բովանդակություն	Կատարողներ	Կիրառության ոլորտ
	<p>լաբորատորիայում (կենտրոնում) արտադրանքի նմուշների փորձարկումների միջոցով տեսչական հսկողության իրականացում տարին մեկ անգամից ոչ պակաս պարբերականությամբ համապատասխանության սերտիֆիկացման սերտիֆիկատի մարմին գործողության կասեցում կամ դադարեցում տեսչական հսկողության բացասական արդյունքի դեպքում</p>		
4ս	<p>արտադրանքի տիպային նմուշի փորձարկումների անցկացում</p> <p>արտադրության վիճակի ստուգման անցկացում</p>	<p>հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (կենտրոն)</p> <p>սերտիֆիկացման մարմին</p>	<p>կիրառելի են սերիական թողարկման արտադրանքի համար Համապատասխանության սերտիֆիկատը տրամադրվում է հինգ տարին չգերազանցող ժամկետով</p>
	<p>համապատասխանության սերտիֆիկացման սերտիֆիկատի տրամադրում հայտատուին փորձարկումների դրական արդյունքների եւ արտադրանքի արտադրության վիճակի ստուգման դեպքում</p> <p>հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) արտադրանքի նմուշների փորձարկումների միջոցով տեսչական հսկողության</p>	<p>մարմին</p> <p>սերտիֆիկացման մարմին</p>	

Սխեմայի նշագիր	Սխեմայի բովանդակություն	Կատարողներ	Կիրառության ոլորտ
5ս	<p>իրականացում տարին մեկ անգամից ոչ պակաս պարբերականությամբ համապատասխանության սերտիֆիկացման սերտիֆիկատի մարմին գործողության կասեցում կամ դադարեցում տեսչական հսկողության բացասական արդյունքի դեպքում</p> <p>արտադրանքի տիպային նմուշի փորձարկումների անցկացում</p> <p>որակի կառավարման համակարգի կամ արտադրանքի արտադրության սերտիֆիկացման իրականացում</p> <p>համապատասխանության սերտիֆիկացման սերտիֆիկատի մարմին տրամադրում հայտատուին փորձարկումների դրական արդյունքների եւ որակի կառավարման համակարգի սերտիֆիկացման կամ արտադրանքի արտադրության դեպքում</p> <p>հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում</p>	<p>հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (կենտրոն)</p> <p>սերտիֆիկացման մարմին</p> <p>սերտիֆիկացման մարմին</p>	<p>կիրառելի են սերիական թողարկման արտադրանքի համար հետեւյալ դեպքերում՝ փորձարկումների անցկացման դեպքում արտադրանքի նմուշների ընտրության իրական ծավալը բավարար չէ թողարկվող արտադրանքի օբյեկտիվ գնահատման համար</p> <p>արտադրանքի արտադրության տեխնոլոգիական գործընթացների վրա կարող են ազդել արտաքին գործոններ սահմանված են արտադրանքի բնութագրերի կայունության բարձր պահանջներ արտադրանքում կատարված փոփոխությունների հաճախակի կիրառվող սխեմա</p> <p>փորձարկումները կարող են անցկացվել միայն արտադրանքը սպառողի</p>

Սխեմայի նշագիր	Սխեմայի բովանդակություն	Կատարողներ	Կիրառության ոլորտ
	(կենտրոնում) արտադրանքի նմուշների փորձարկումների միջոցով տեսչական հսկողության իրականացում տարին մեկ անգամից ոչ պակաս պարբերականությամբ համապատասխանության սերտիֆիկացման սերտիֆիկատի մարմին գործողության կասեցում կամ դադարեցում տեսչական հսկողության բացասական արդյունքի դեպքում		մոտ մոնտաժելուց հետո Համապատասխանության սերտիֆիկատը տրամադրվում է հինգ տարին չգերազանցող ժամկետով
6ս*	սերտիֆիկացման ներկայացված արտադրանքի խմբաքանակից վերցված արտադրանքի նմուշի (նմուշների) փորձարկումների անցկացում	հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (կենտրոն)	կիրառելի են արտադրանքի խմբաքանակի համար Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը տարածվում է արտադրանքի հայտագրված խմբաքանակի վրա:
	սերտիֆիկացման ներկայացված արտադրանքի խմբաքանակի համար համապատասխանության սերտիֆիկատի տրամադրում հայտատուին փորձարկումների դրական արդյունքի դեպքում	սերտիֆիկացման մարմին	
7ս*	արտադրանքի յուրաքանչյուր միավորի փորձարկումների անցկացում	հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (կենտրոն)	առաջարկվում է կիրառել համապատասխան արտադրանքի (եզակի արտադրատեսակներ) մեկանգամյա բնույթ կրող

Սխեմայի նշագիր	Սխեմայի բովանդակություն	Կատարողներ	Կիրառության ոլորտ
----------------	-------------------------	------------	-------------------

արտադրանքի միավորի սերտիֆիկացման համապատասխանության մարմին
սերտիֆիկատի տրամադրում
հայտատուին փորձարկումների դրական արդյունքի դեպքում

արտադրության կամ իրացման դեպքում Համապատասխանության սերտիֆիկատի գործողությունը տարածվում է արտադրանքի հայտագրված քանակի վրա:

Հավելված թիվ 6

«Երկաթուղային տրանսպորտի
ենթակառուցվածքի
անվտանգության մասին» ՄՄ
տեխնիկական կանոնակարգի

ՑԱՆԿ**ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ****ՍԽԵՄԱՆԵՐԻ**

Սխեմայի նշագիր	Սխեմայի բովանդակություն	Կատարողներ	Կիրառության ոլորտ
1h	համապատասխանության հայտարարագրի ընդունում սեփական ապացույցների հիման վրա	հայտատու	կիրառելի են սերիական թողարկման արտադրանքի համար սեփական ապացույցների հիման վրա, այն արտադրանքի ցանկին համապատասխան, որի համապատասխանության հավաստումն իրականացվում է համապատասխանության հայտարարագրի ընդունման ձեռով
2h	արտադրանքի նմուշի հետազոտությունների, փորձարկումների եւ չափումների (այսուհետ՝ փորձարկումներ) անցկացում համապատասխանության հայտարարագրի ընդունում հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) անցկացված փորձարկումների դրական արդյունքի դեպքում	հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (կենտրոն) հայտատու	կիրառելի են սերիական թողարկման արտադրանքի համար սեփական ապացույցների ու սերտիֆիկացման մարմնի եւ (կամ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) մասնակցությամբ ձեռք բերված ապացույցների հիման վրա, այն արտադրանքի ցանկին համապատասխան, որի համապատասխանության հավաստումն իրականացվում է համապատասխանության

Սխեմայի նշագիր	Սխեմայի բովանդակություն	Կատարողներ	Կիրառության ոլորտ
			հայտարարագրի ընդունման ձեռով
3h	<p>արտադրանքի տիպային նմուշի փորձարկումների անցկացում</p> <p>որակի կառավարման համակարգի սերտիֆիկացման իրականացում</p>	<p>հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (կենտրոն)</p> <p>սերտիֆիկացման մարմին</p>	<p>կիրառելի են սերիական թողարկման արտադրանքի համար սեփական ապացույցների ու սերտիֆիկացման մարմնի եւ (կամ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) մասնակցությամբ ձեռք բերված ապացույցների հիման վրա, այն արտադրանքի ցանկին համապատասխան, որի համապատասխանության հավաստումն իրականացվում է համապատասխանության հայտարարագրի ընդունման ձեռով</p>
	<p>համապատասխանության հայտարարագրի ընդունում հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) անցկացված փորձարկումների դրական արդյունքի եւ սերտիֆիկացման մարմնի կողմից որակի կառավարման համակարգի սերտիֆիկացման դեպքում</p>	<p>հայտատու</p>	
4h	<p>արտադրանքի տիպային նմուշի փորձարկումների անցկացում</p> <p>որակի կառավարման համակարգի սերտիֆիկացման իրականացում</p>	<p>հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (կենտրոն)</p> <p>սերտիֆիկացման մարմին</p>	<p>կիրառելի են սերիական թողարկման արտադրանքի համար սեփական ապացույցների ու սերտիֆիկացման մարմնի եւ (կամ) հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) մասնակցությամբ</p>

Սխեմայի նշագիր	Սխեմայի բովանդակություն	Կատարողներ	Կիրառության ոլորտ
----------------	-------------------------	------------	-------------------

ձեռք բերված ապացույցների հիման վրա, այն արտադրանքի ցանկին համապատասխան, որի համապատասխանության հավաստումն իրականացվում է համապատասխանության հայտարարագրի ընդունման ձեռով

<p>համապատասխանության հայտատու հայտարարագրի ընդունում հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) անցկացված փորձարկումների դրական արդյունքի եւ սերտիֆիկացման մարմնի կողմից որակի կառավարման համակարգի սերտիֆիկացման դեպքում հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) արտադրանքի նմուշների փորձարկումների միջոցով տեսչական հսկողության իրականացում տարին մեկ անգամից ոչ պակաս պարբերականությամբ համապատասխանության հայտարարագրի գործողության կասեցում կամ դադարեցում տեսչական հսկողության բացասական արդյունքի դեպքում</p>	<p>հայտատու սերտիֆիկացման մարմին սերտիֆիկացման մարմին</p>
---	---

Սխեմայի նշագիր	Սխեմայի բովանդակություն	Կատարողներ	Կիրառության ոլորտ
5h	<p>համապատասխանության հայտարարագրման ներկայացված արտադրանքի խմբաքանակից վերցված արտադրանքի նմուշի (նմուշների) փորձարկումների անցկացում</p> <p>համապատասխանության հայտարարագրի ընդունում հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) անցկացված փորձարկումների դրական արդյունքի դեպքում</p>	<p>հավատարմագրված փորձարկման լաբորատորիա (կենտրոն)</p> <p>հայտատու</p>	<p>կիրառելի են այն արտադրանքի սահմանափակ, նախապես պայմանավորված ծավալով իրացման դեպքում, որը կարճ ժամանակահատվածում պետք է մատակարարվի առանձին խմբաքանակներով՝ դրանց սերիական արտադրությանը զուգընթաց (ՄՄ միասնական մաքսային տարածք ներմուծվող արտադրանքի համար՝ կարճաժամկետ պայմանագրերի դեպքում, ՄՄ միասնական մաքսային տարածքում արտադրվող արտադրանքի համար՝ սահմանափակ ծավալով թողարկման դեպքում):</p>